


Ի ՓԱՌՍ ՄԵԾԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻՆ ՏԻԵԶԵՐԱՑ

ՅԱՆՈՒՆ ՄԵԾ ՎԱՐՊԵՏԻ ԳԱՂՂԻԱԿԱՆ ՈՐՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ
Ն. Բ. ԼԻԻՍԻԷՆ ՄԻԻՐԱ ՊԱՅԱԶԱՏԻ




ՄԵԾ ԱՐԵԻԵԼԲ ԳԱՂՂԻՈՅ
ԳԵՐԱԳՈՅՆ ԱՏԵԱՆ ԳԱՂՂԻՈՅ ԵՒ ԳԱՂՂԻԱԿԱՆ
ՍԵՊՉԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ



Գրադարան
Ազգային
Մաթեմատիկա

ՀԱՒԱԲԱԾՈՅ ՏԵՏՐԻՑ
ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ԱՍՏԻՃԱՆԱՑ



Տ Ե Տ Ր

ԱՇԱԿԵՐՏԻ ԱՍՏԻՃԱՆԻՆ

၇၂၅၂

ပြည်ထောင်စု အစိုးရ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Օթ .: . կ մը՝ իրեն ներկայացած Օտ .: . ր մը ընդու-
նելու ատեն՝ պէտք է լաւ խորհի թէ ընկերութեան անդամ
մը պիտի նուիրէ , եւ իւրաքանչիւր անդամակցի ալ Այդ .: .
մը , եւ թէ այն Օտ .: . ն ընդունուելէն ետեւ՝ համայն աշ-
խարհի Որմնադիրք պարտաւոր են զայն իբրեւ Այդ .: . ճանչ-
նալ . հետեւաբար Օթ .: . ին պատիւը կը պահանջէ որ այն
նուիրեալն ամեն որմնադրաց ներկայացուելու արժանաւոր
ըլլայ . եւ վերջապէս պէտք է որ Օթ .: . ին վկայութեամբ
ամեն Այդ .: . ներէ ընդունուելու արժանանայ .

Ուրեմն պէտք է որ Օթ .: . ները հնար եղածին չափ
անաչառութիւն եւ զգուշաւորութիւն բանեցնեն առա-
ջարկեալ անձանց վրայ առնուելիք տեղեկութեանց մասին :
Ընծայման եղանակին մէջ միակերպութիւն հարկաւոր է :


Գաղղիոյ Մ .: . Ար .: . քն այս սկզբամբք վառուած ,
խորհրդաւոր Ատիճ .: . ըլլա ընծայման այնպիսի եղանակ
մը որոշած է , որով առաջին ընծայումներն իրենց հին ու
պատկառելի անարատութեան մէջ կարենան մնալ :

Թղթակից Օթ .: . ները պէտք է որ այն եղանակին հա-
մեմատ վարուին , որպէս զի Որմնադրութեան ճշմարիտ ըս-
կըզբանց հակառակ զանազանութիւն մը չի ներկայացընեն
Որմնադրաց :



LIBRARIUS

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.



Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք



Օտ .: Ի մը Ր նծ .: ն առաջարկութիւնը պէտք է որ
 իրմէ ստորագրուած տոմսակով մը ըլլայ, որուն մէջ նշա-
 նակուած ըլլան իւր անունը, մականունը, արհեստը, բնա-
 կարանը, տարիքը, եւ ծնած տեղը, ինչպէս նաեւ այն ան-
 ձանց անունը՝ որոցմէ կրնայ իր վրայ տեղեկութիւն մը առ-
 նուիլ: Ը,յս տոմսակն առաջարկութեանց քսակին մէջ պէտք
 է ձգուի կամ ուղղակի Մեծ .: ին զրկուի:

Երբ Օտ .: մը ընծայման առաջարկուի, Ր նդհանուր
 կանոնաց եւ Սահմ .: թեանց մէջ նշանակուած եզանա-
 կաւ հարկ է վարուիլ: (Յօդ . 252 եւ հետեւեալք): Առա-
 ջարկութեան յաջորդ նստին մէջ Մեծ .: ն՝ տեղեկարբեր
 Եղբ .: ըց դրած տեղեկութիւնները կարգալէ ետեւ՝ կրսէ .
 «Ը եւ Բ . Գէտ Եղբ .: ք, հրաւիրեցէք Օթ .: իս
 Եղբ .: քը, որ Ը . . . Օտ .: վրայ ստացած տեղեկու-
 թիւննին հաղորդեն Օթ .: իս, եւ կարգացուած տեղե-
 կագիրերուն վրայ իրենց դիտողութիւնները յայտնեն »:
 Գ .: ք կը կրկնեն սոյն հրաւերը:

Եթէ Եղբ .: ներէն ոմանք դիտողութիւն ունենան,
 ոտքի վրայ կեննեն եւ ձեռքերնին վեր առնելով կարգաւ
 խօսք կուզեն: Ը,յն սիւնակին Գ .: ը՝ որուն առջեւ նստած
 են՝ կօփիչով անգամ մը՝ կը զարնէ սեղանին եւ կրսէ .

« Մեծ .: , իմ սիւնակէս Եղբ .: մը խօսք կը խնդրէ »:
 Մեծ .: կը պատասխանէ . « Եղբ .: իմ, կրնաք խօսիլ »:

Ըրեւ .: գանուող Եղբ .: ք՝ եթէ խօսիլ ուզեն՝ պէտք
 է որ ուղղակի Մեծ .: էն խօսելու հրաման խնդրեն:

Գիտողութիւններէն ետքը Մեծ .: կրսէ . « Եղբ .:
 Ըտեն .: , ձեր եզրակացութիւնը տուէք »:

Եզրակացութիւնը տրուելէն ետեւ, Մեծ .: կը ծա-

նուցանէ թէ քուէտուփը պիտի շրջաբերի, եւ քուէները հետեւեալ կերպիւ պէտք է հաւաքուին :

Նշք .: Արարող .: Լուրաքանչիւր Նշք .: Մէկ ճերմակ եւ մէկ ալ սեւ գնտակ կուտայ . վերջը Նշք .: Մարդ .: քուէտուփը կը ներկայացնէ Մեծ .: Ին, Դ .: բուն, Ատեն .: Ին եւ Արեւ .: բազմող Նշք .: ց, նոյնպէս Սիւնակներուն առջեւ նստողներուն, եւ ասուփը Մեծ .: Ին սեղանին վրայ կը դնէ, որ Նշք .: Ատենա .: Ին եւ Նշք .: Քարտ .: Ին ներկայութեամբ քուէհամարը կընէ : Յետոյ Մեծ .: կոփիչով հարուած մը կը զարնէ զոր Դ .: ք կը կրկնեն եւ քուէին արդիւնքը կը ծանուցանէ :

Նոյն արարողութիւնները պէտք է կատարուին նաեւ անդամակցութեանց եւ անկանոն Որմ .: աջ կանոնաւորուած ատեն : (Յօդ . 255 Սահմ .: .)

ՀԱՆԳԻՐԸ ԸՆԾԱՅՄԱՐԲ



ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԷՔ

Օտ .°. մը առաջարկող Եղբ .°. ը՛ աշխատութեանց սկսելէն կէս ժամ առաջ կառնէ զայն կը տանի եւ Պատրաստիչ Եղբ .°. կը յանձնէ, որ եթէ աշխատութեանց ժամը դեռ եկած չէ, ծածուկ տեղ մը կը դոյցէ զայն որպէս զի չի կարենայ մէկը տեսնել եւ ճանչնալ :

Պատր .°. Եղբ .°. ը ծանր դէմք մը պէտք է առնու, բայց առանց խտուածեան . իրեն եղած հարցմունքներուն պէտք է համառօտիւ պատասխանէ, որպէս զի ընծայացուին առ իժ չարուի ստէպ հարցումներ ընելու : Աշխատութեանց բացուելէն քիչ մը առաջ եւ Մեծ .°. ին հրամանաւ Եղբ .°. Պատր .°. մտածութեան սենեակը կը տանի Օտ .°. ը :

Այս սենեակը մութ պէտք է ըլլայ եւ կանդեղով մը լուսաւորեալ : Պատերը սեւ ներկուած եւ մահապոյժ նշաններով լի, որ կարող ըլլան սոսկում տխրութիւն եւ մտածութիւն ազգել :

Մարդը բարոյականի իմաստներ եւ խտտակրօն փիլիսոփայութեան առաձներ՝ պատերուն վրայ կարդացուելու կերպով գծուած կամ շրջանակի մէջ ամփոփուելով կախուած պէտք է ըլլան այն առանձնական սենեակին զանազան

կողմերը . Մեռելի գանկ մը կամ կմախք մը հոն պէտք է յիշեցնէ մարդկային իրաց ոչնչութիւնը : Այն սենեկին մէջ պէտք է գտնուի միակ աթոռ մը , սեղան մը , հաց մը , ջրով լեցուն սափոր մը , աղ , երկու ամանի մէջ ծծումք , թուղթ , գրիչներ եւ մեղան :

Սեղանին վրայ պէտք է նկարուած ըլլան աքաղաղ մը , աւաղէ ժամացոյց մը , եւ այս նշանակներուն ստորոտը հետեւեալ բառերը պէտք է դրոշմուած ըլլան .

ԱԶԱՐՁՈՒԹԻՒՆ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ

Յետագայ արձանագրութիւնները կրնան հոն գրուիլ .

1. Աթէ հետաքրքրութիւնը քեզ հոս բերաւ , դուրս ել :
2. Աթէ քու պակասութիւններդ հասկընալէ կը վախնաս , մեր մէջ մնալդ գէշ է քեզի :
3. Աթէ համարձակիս կեղծաւորիլ , դողա՛ , քու միտքդ կը հասկընան ,
4. Աթէ մարդկային պատիւներ կուզես , դուրս ել , հոս այնպիսի բան չեն ճանչնար .
5. Աթէ հողիդ սարսափ զգաց , աւելի առաջ մի երթար :
6. Աթէ յարատեւես , տարերաց միջոցաւ կը մաքրուիս , խաւարի վիհէն կ'երնես եւ լոյսը կը տեսնես ,


Օտ . . . ը քիչ մը ժամանակ մտածութեան սենեկին մէջ պէտք է թողուի . յետոյ Ազր . . . Պատր . . . հետեւեալ երեք խնդիրները կը ներկայացընէ գրով , զորս Օտ . . . ը նոյն պէս գրով պէտք է լուծէ :

Ի՞նչ է մարդուս պարտքն առ Աստուած .

Ի՞նչ է իւր պարտքն առ անձն .

Ի՞նչ է իւր պարտքն առ նմանս իւր :

Այս հարցմանքներն այն կերպով պէտք է դժուած ըլլան , որ իրարու մէջ բաւական միջոց ըլլայ՝ Օտ . . . ընտուած ամեն մէկ պատասխանները պարունակելու .



ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

Նշք . . . ք ժողովատեղին հաւաքուելէ եւ նշաններնին կախելէ ետեւ , Սեծ . . . կոփիչի հարուած մը կուտայ , եւ անմիջապէս իւրաքանչիւր ոք իւր տեղը կերթայ եւ ոտքի վրայ կը կենայ :

Սեծ . . . կըսէ . « Նշք . . . Ն . Գ . . . , դու որմնադիր ես » .

Պ . « Նշք . . . քս զիս այնպէս կը ճանչնան » :

Ն . « Ի՞նչ է Գ . . . ի մը առաջին պարտքը Օթ . . . ին մէջ » :

Պ . « Ստուգել թէ տաճարը փակուած է :

« Ստուգէ , Նշք . . . իմ (1) » :

Ն . « Օթ . . . ին մէջ Գ . . . ի մը երկրորդ պարտքն ի՞նչ է » :

Պ . Ստուգել թէ ներկայ դանուող Նշք . . . ք ամենն ալ Որմնադիր եւ Օթ . . . իս անդամ են » :

Սեծ . . . կոփիչի հարուած մը կուտայ եւ կըսէ . « Իկարդ , Նշք . . . ք իմ » :

Սեծ . . . « Ն . եւ Բ . Գ . . . Նշք . . . ք , ստուգեցէք թէ

(1) Ա . Գ . . . ք կը կրկնէ այս ազգարարութիւնը Նշք . . . ք Բ . Գ . . . ին որ կը հաղորդէ զայն Նշք . . . ք ներքին դանապահին :

Նշք . . . ք Ն . Գոն . . . իւր պաշտօնը կը կատարէ , եւ կը դառնայ Բ . Գ . . . ին կըսէ . « Գոները փակուած են » :

Բ . Գ . . . ք կոփիչովն անդամ մը կը զարնէ եւ ազգարարութիւնը Ա . Գ . . . ին կը կրկնէ :

Ա . Գ . . . ք հարուած մը կը զարնէ եւ կըսէ . « Սեծ . . . ք , դրոները փակուած են » :

ամեն ներկայ դասուող Եղբ . . . ք Որմնագիր եւ Օթ . . . իս
անդամ են (1) :

“ Եղբ . . . Ե . . . Գ . . . , հիւսիսային սիւնակին կողմը դըս-
նուող բոլոր Եղբ . . . ք Որմնագիր են եւ Օթ . . . իս ան-
դամ ” :

Ե . . . Գ . . . , կոփիչի հարուած մը կուտայ եւ կըսէ -
“ Մեծ . . . , երկու սիւնակաց առջեւ շարուած Եղբ . . . ք
որմնագիր են եւ Օթ . . . իս անդամ ” :

Մեծ “ Եղբայէս եւ Եր . . . ք դասուողները ” :

Գ . . . “ Որմնագիրք ժամը քանի՞ն իրենց աշխատու-
թիւնը կսկսին ” :

Պ . . . “ Կէս օրին ” :

Գ . . . “ Ժամը քանի՞ն է ” :

Պ . . . “ Կէս օր է ” :

Մեծ “ Որովհետեւ կէս օր է եւ մեր աշխատու-
թիւններն սկսելու ժամն է , Ե . . . եւ Բ . . . Գ . . . Եղբ . . . ք , հրա-
ւերեցէք երկու սիւնակներուն Եղբ . . . ները որ ձեզի եւ
ինձի հետ միանան որպէս զի կանան . . . Ս . . . Օթ . . . իս աշ-
խատութիւններն սկսինք Աշակ . . . Ետիճ . . . ին սովորական
նշաններովն ու խորհուրդներովք :

Գ . . . ք կը կրկնեն այս ազգարարութիւնը :

Մեծ . . . , կոփիչի երեք հարուած կուտայ զոր Գ . . . ք
կը կրկնեն , եւ կըսէ . . . “ Մեծ . . . ճարտ . . . ն Տիեզ . . . ց
լուսաւորէ եւ պահպանէ մեր աշխատութիւնները : Եւ իս
Եղբ . . . ք իմ , նշանաւ բախմամբ եւ ձայնարկութեամբ ” :
Յետոյ կաւելցնէ :

“ Աշխատութիւնք սկսան , նստէք Եղբ . . . ք իմ ” :

Խօսքը Եղբ . . . ք Բարտ . . . ին ուղղելով . . . “ Եղբ . . . ք

(1) Երկու Գ . . . քն իրենց սիւնակին առջեւ կեցող ամեն
Եղբ . . . քը կը քննեն , որոնք ՚ի կարգի պէտք է դասուին . . . եւ երբ
իրենց տեղը շարուին , Բ . . . Գ . . . կոփիչի հարուած մը կուտայ եւ
կըսէ . . .

Վարա . . . , հաճեցէք վերջին նստին ատենագրութիւնը կարգալ : (Սոյն ընթերցման միջոցին՝ Ատեն . . . ը նախորդ նստին աշխատութեանց բովանդակութիւնն աչքին առջեւ պէտք է ունենայ :)

Մեծ . . . կոփիչի հարուած մը կուտայ , Պ . . . ք կը կրկնեն , եւ կրտէ . « Ուշագրութիւն Եղբ . . . ք իմ » :

Բնթերցումը ըննալէն վերջը , դարձեալ հարուած մը կը բաղկէ զոր Պ . . . ք կը կրկնեն , եւ կրտէ . « Ա . եւ Բ . Պ . . . Եղբ . . . ք , ձեր սեփհական սիւնակներուն առջեւ շարուած Եղբ . . . ք իմացուցէք , որ եթէ կարգացուած ատենագրութեան վրայ Եղբ . . . մը գիտողութիւն ունի , խօսքը կը տրուի իրեն :

Եղբ . . . Պ . . . ք կոփիչի հարուած մը կուտան եւ ազդարարութիւնը կը կրկնեն : Եթէ գիտողութիւն ընող չըլլայ , Բ . Պ . . . կոփիչի հարուած մը կուտայ ու կրտէ . « Եղբ . . . Ա . Պ . . . , շիւսիսային սիւնակին առջեւ շարուած Եղբ . . . ք մէջ ընութիւն կը տիրէ » : Բ . Պ . . . կոփիչի հարուած մը կուտայ ու կրտէ . « Մեծ . . . , երկու սիւնակներուն առջեւ ալ ընութիւն կը տիրէ » :

Մեծ . . . « Եղբ . . . Ատեն . . . , հաճեցէք ձեր եզրակացութիւնը տալ : Եղբ . . . Ատեն . . . կրտէ . « Աւերակացընեմ որ նախորդ նստին ատենագրութիւնն ընդունուի :

Մեծ . . . « Եղբ . . . Ատեն ին եզրակացութիւնը քուէի կը գնեմ . որոնք որ ընդունիլ կուզեն՝ ձեռքերնին վեր վերցընեն » : Յետոյ . « Շիմա ալ հակառակ կարծիք ունեցողները ձեռքերնին վեր վերցընեն » (1) : Ատենագրութիւնն ընդունուեցաւ :

Մեծ . . . « Եղբ . . . Արար . . . , տաճարին գաւիթը գացէք նայեցէք թէ այցելու Եղբ . . . ք կա՞ն » :

Եղբ . . . Արար . . . իրեն տրուած պաշտօնը կատարելու

(1) Եթէ գիտողութիւն մ'ըլլար , սովորական ձեւով վիճարանութեան կենթարկուէր :

կերթայ, եւ յետոյ 'ի դարձին կուգայ եւ երկու Պ. . . րուն մէջ տեղը կենարով իւր պաշտօնին համարը կուտայ, թէ որ Այց . . . ներ կան, Մեծ . . . Եղբ . . . Մարգ . . . ին կը յանձնէ որ երթայ զանոնք փորձէ եւ կանոնաւոր ըլլալին ստուգէ :
 Երբոր Եղբ . . . Մարգ . . . իր պաշտօնին համարը կուտայ, Մեծ . . . կը հրամայէ որ Այց . . . Եղբ . . . ք իրենց Ատիճ . . . ին վայլած պատիւներով ըստ օրինի ներս բերուին : (Յօդ . 262, 263 եւ 264) :

Եղբ . . . ներքին Ղռն . . . իմաց կուտայ Եղբ . . . Արար . . . ին թէ Այց . . . ները կրնան ներս բերուիլ :

Եղբ . . . Արար . . . Տաճարին դուռը կը բաղխէ Ուրմ նադրաբար :

Մեծ . . . « Եղբ . . . Պ . . . , նայել տուէք թէ ո՞վ է որ Տաճարիս դուռը Ուրմ . . . բար կը զարնէ » :

Եղբ . . . Պ . . . « Այցելու Եղբ . . . ներ են՝ որք Տաճարս մտնել կը խնդրեն » :

Մեծ . . . « Երես տուէք » : Ոտք ելէք եւ 'ի կարգ, Եղբ . . . ք իմ (1) :

Մեծ . . . քաղաքավարական խօսքեր կուղղէ Այց . . . Եղբ . . . րց, եւ 'ի պատիւ անոնց ծափահարութիւն մը ընել կուտայ, Եղբ . . . Այց . . . ները շնորհակալ կըլլան եւ կը ծափահարեն :

Ղործարանն ալ կը պատասխանէ այն շնորհակալութեանց, բաց 'ի այն պարագաներէն՝ ուր սովորութիւնը առակնածութեան չներեր :

Մեծ . . . « Եղբ . . . Արար . . . , Այց . . . Եղբ . . . ներն իրենց սեփհական տեղերը տար » :

(1) Երբոր ներածութիւնն արարողութեամբ ըլլայ, Այց . . . ներուն պարտուպառչած պատիւներն ընել կուտայ :

Սովորական Այց . . . ները՝ Եղբ . . . Արար . . . նախ երկու Պ . . . րուն մէջ տեղը կը կեցնէ :

ՆՈՒԻՐԵԼՈՅ ՄԸ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

(ՆԱԽՈՐԿ ՆՍՏԻՆ ՄԵՋ ԲՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՄԲ ԸՆԳՈՒՆՈՒԱԾ)

Մեծ . . . «Եղբ . . . Մարդ . . . , սառու գէ՛ թէ նախորդ
նստի մը մէջ փորձերը կրելու ընդունուած Օտ . . . ք սպասու
ման սրահը կամ գաւի՞թն է (1) :

«Մ. եւ Բ. Գ. . . Եղբ . . . ք, ձեր սխնականքունն առ
ջեւ շարուած Եղբ . . . ց հարցուցէք թէ Մ. . . . Օտ . . . ին
ընդունելու թեան գէ՛մ առարկութիւն մ'ունի՞ն ներկայա
ցընելիք (2) :

Մեծ . . . «Որովհետեւ ընդդիմութիւն չիկայ, Եղբ . . .
Մարդ . . . , ձեզի յանձնուած է բնական փորձերն Օտ . . . ին
կրել տարու եւ իւր խորհրդաւոր ուղեւորութեանց մէջ ա
ռաջնորդելու պաշտօնը . գնացէք տարէք զինքը մտածու
թեան սենեակը, ըսէք իրեն թէ պէտք է որ իր կտակն ընէ,
եւ իրեն ուղղուած հարցմանց գրով պատասխան տայ :
Նշանակէս բոլոր մետաղեայ նիւթերը վրայէն ա՛ռ (3) .

Մեծ . . . « Եղբ . . . Մարդ . . . , դարձիք Օտ . . . ին

(1) Եղբ . . . Մարդ . . . կերթայ եւ տեղեկութիւնը կը բերէ
Եղբ . . . Բ. Գ. . . ին՝ որ նոյնը կը հարցրդէ Ա. ին, ան ալ Մեծ . . . ին :

(2) Եթէ ընդդիմութիւն ըլլայ, Եղբ . . . Ա. Գ. . . զնոյն կի
մացնէ Մեծ . . . ին եւ Օթ . . . կորոշէ : Եթէ դիմադրութիւն
չըլլայ, Եղբ . . . Գ. . . ք նոյնը կիմացընեն Մեծ . . . ին :

(3) Եղբ . . . Մարդ . . . Օտ . . . ին քով կերթայ, զինքը մտա
ծութեան խոցը կը տանի, եւ վրայէն առած զարդերն ու մետաղ
եայ նիւթերը ներս կը բերէ . միանդամայն կը ծանուցանէ թէ իր
պարտքը կատարած է :

քով եւ իր կտակն ու հարցմանց տուած պատասխանները մեզի բեր » (1) :

« Եղբ . . . Մարդ . . . երրորդ անգամ Օտ . . . ին քով գնա , զինքը պատրաստէ եւ մինչեւ Տաճարին դուռը բերելէ ետեւ իմաց տուր մեզ » (2) :

« Մեծ . . . , Տաճարին դուռն անկանոն կերպով կը բախեն » :

Մեծ . . . « Եղբ . . . Ա . Գ . . . , նայեցէք ո՞վ է այն յանդուգն Օտ . . . որ մեր խորհուրդները վրդովել կուզէ » (3) :

« Ո՞վ ես դու , ի՞նչ կուզես » :

Եղբ . . . Մարդ . . . կրտսէ . . . « Ընտանորդած մարդս Օտ . . . մէ որ Արմնագիւր ըլլալու կը փափաքի » :

Մեծ . . . « Հարցուցէք այդ Օտ . . . ին թէ Ըզատար Արմ . . . ց ուխտին մէջ ընդունուելու համար իր յոյսն ի՞նչ բանի վրայ դրած է » :

« Պատասխան . . . « Այլ յուսայ ընդունուել , վասն զի ազատ եւ պատուաւ որ վիճակ մը ունի եւ անստղիւտ վարուց տէր է :

(1) Եղբ . . . Մարդ . . . իրեն տրուած պաշտօնը կը կատարէ , եւ հարցմանց պատասխաններուն հետ կտակը ներս կը բերէ , որ Մեծ . . . ին յանձնուելէ առաջ պէտք է Եղբ . . . Գանձ . . . ին ցուցուի : Կտակը կարգացուելէն ետեւ Մեծ . . . սովորական ձեւով կը հարցնէ Եղբ . . . րց թէ զխտողութիւն մ'ունին :

Եթէ զխտողութիւն ըլլայ , վիճարանութեան կենթարկէ . կթէ չըլլայ , Եղբ . . . Մարդ . . . ին կրտսէ . . .

(2) Եղբ . . . Մարդ . . . մտածութեան սենեակը կը դառնայ , Օտ . . . ին աչքը կը կապէ , զգետան եւ փողպատը հանել կուտայ , թեւը կը մերկացնէ , տաճարին դուռը կը տանի , եւ ուժով կը բաղխէ : Ա . Գ . . . բարձրաձայն կրտսէ . . .

(3) Եղբ . . . Ա . Գ . . . այս հրամանը Բ . ին կը հաղորդէ , ան ալ Եղբ . . . Գան . . . ին , որ դուռը կէս մը կը բանայ եւ ձեռքը նուիրելոյն կուրծքին վրայ դնելով կրտսէ . . .

Մեծ . . . « Հարցուցէք իրեն իր անունը , մականունը ,
ծնած տեղը , տարիքը , արհեստը եւ հիմակուան բնակա-
րանը » :

Ղուռը կը բացուի Մարզ . . . դուրսէն նուիրելոյն հետ ,
ներսէն ալ 'Ն , Ղուն . . . , կամ թէ որ այն չըլլայ՝ Արար . . .
առած պատասխանին Մեծ . . . ին կը հաղորդեն : Պատաս-
խաններն իրեն հաղորդուելէն ետեւ Մեծ . . . կըսէ .

« Հարցուցէք այդ Օտ . . . ին թէ ստուգիւ իր դիտա-
ւորութիւնն ազատ Որմ' . . . ընդունուի՞լ է » :

Երբոր պատասխանը « այո' » է .

Մեծ . . . « Ներս բերէք » :

Եղբ . . . Ղուն . . . իր սուրին ծայրն անոր կուրծքին վրայ
դնելով կ'ըզացնէ : Այս միջոցին Ղուռը դժբախտաբար կը
դոցուի :

Մեծ . . . « Պարո'ն , մեր մէջն ընդունուելու համար
մեր պահանջած յատկութիւններն են կատարեալ անկեղ-
ծութիւն , բացարձակ հլութիւն , եւ անյողդողդ հաստա-
տամոտութիւն : Իմ հարցմանցս տալիք պատասխաննուդ
համեմատ պիտի դատենք թէ ձեր վրայ ի'նչ կարծիք պէտք է
ունենանք (1) :

Հարց . « Հոս ներկայանալովս ի'նչ է ձեր միտքը .
ո՞վ այդ փափաքը թելադրեց ձեզ » :

Հարց . « Որմն . . . թեան վրայ ի'նչ գաղափար ունիք » :

Հարց . « Պատրաստ էք կրելու այն փորձերը՝ որոց
մէջէն պէտք է անցնիք » :

Հարց . « Վիտէ'ք թէ մեր մէջ մարդիկ ի'նչ պար-
տականութիւններ յանձն կանուն » :

(1) Ամեն մէկ հարցման վրայ Մեծ . . . պնդելով Օտ . . . ին
պատասխանին կոպտէ : Այնպէս անոր ընդունակութեանը համե-
մատ խնդիրներ առարկել , եւ դրով առաջարկուած երեք խըն-
դիրներուն ու իր կտակին վրայ հարցումներ ընել :



976

Հարց . « Ո՞չ ներկայացուց ձեզ այս () թ . օ . խ » :

Հարց . « Գիտե՞ք անոր Որմնադիրը ըլլալը » :

Հարց . « Չիմացո՞ւց ձեզ թէ Որմնադիրը ի՞նչ գործի կղբազին » :

Հարց . « Մտածութեան սենեկին մէջ Չեր աչքին ներկայացած առարկաներն ի՞նչ խորհրդածութիւն ընել տուին ձեզ » :

Հարց . « Ի՞նչ կը մտածէք ձեր հիմակուան գտնուած վիճակին վրայ » :

Հարց . « Ի՞նչ գաղափար կունենաք այնպիսի ընկերութեան մը վրայ , որուն մէջ կը պահանջեն որ նորընծայն այդպիսի վիճակի մը մէջ ներկայացուի » :

Հարց . « Չեր ընթացքը , քիչ մը թեթեւամտութիւն չէ՞ » :

Ս . Երջը Մեծ . օ . կըսէ . « Չեզ անհրաժեշտ փորձերու պիտի ենթարկենք , Հիմակուց կիմացընեմ ձեզ , պարտն , որ եթէ այն փորձերուն միջոցին ձեր ուժն ու արիութիւնը կորսնցընէք , կրնաք հրաժարիլ : Ե՛յն փորձերը խորհրդաւոր ու նշանական են , ուստի կրցածնուդ չլաի ու շաղբութիւն պիտի ընէք անոնց (1) :

Մեծ . օ . « Եղբ . օ . Մարդ . օ . , առաջին ուղեւորութիւնը կատարել տուէք (2) :

(1) Քանի մը վայրկեան խոր լռութենէ ետեւ .

(2) Եղբ . օ . Մարդ . օ . նուիրեալն երկու ձեռքէն բռնելով կը պարացընէ , Արեւմուտքէն ճանբայ ելնելով , Հիւսիսային Սիւնակէն անցնելով մինչեւ Արեւելք , Արեւելքէն Հարաւ , Հարաւէն Արեւմուտք , ուր միշտ ուղեւորութիւնները կը լմնանն :

Առաջին ուղեւորութիւնը դժուարութիւններով լցուն պէտք է ըլլայ , կարճ քայլերով , խիստ անկանոն ընթացքով եւ շատ ծանր :

Տեղւոյն դիրքէն օդուս քաղելով ջանալու է խոչընդոսնելով եւ արհեստիւ պատրաստուած արգելքներով ուղեւորութիւնը դժուարացընել . բայց ստանց այնպիսի միջոցներ գործածելու որ

ԱՌԱՋԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Բ. Գ. : հարուած մը տալով կըսէ . « Մեծ . . , առաջին ուղեւորութիւնը կատարուեցաւ » :

Մեծ . . : նուիրելոյն կըսէ . « Պարո՛ն , կրնա՞ք մեկնել այս ուղեւորութիւնը : Ի՞նչ զգացիք կատարած ատեննիդ » : Պատասխան

Մեծ . . : կը շարունակէ . « Ե՛յս առաջին ուղեւորութիւնը կենաց խորհրդաւոր պատկերն է . կիրքերուն վրդովումը , զանազան շահերու դիմահարութիւնը , ձեռնարկութեանց դժուարութիւնը , ձեղի վնասելու եւ միշտ ետ ձգելու պատրաստ հակառակորդաց ձեր քայլերուն ներքեւ դիզած խոչընդոտները , ասոնց ամենուն պատկերն է ձեր քալած ճամբուն անհարթութիւնը , ինչպէս նաեւ ձեր բողբոսիքը եղած աղմուկը , Դժուար եւ խորտուբորա ճանբու մը մէջ մտաք , նեղութեամբ բլբլ մը դագաթը ելաք , ուսկից խորխորատի մը մէջ պիտի իյնայիք՝ եթէ պաշտպան ձեռք մը ձեզ չօգնէր : Ար նշանակէ այս թէ աշխարհիս մէջ մարդս շատ անգամ ինքիւնք մեծ նեղութեանց մէջ կը ձգէ այնպիսի վիճակ մը ձեռք բերելու համար , որուն առանց օգնութեան եւ նեցուկի խիտ դժուար է հասնիլ . Հիմա կուզէ՞ք փորձերը շարունակել » :

Երբոր « այո՛ » պատասխան առնուի , Մեծ . . . « Որովհետեւ այդպէս է , Եղբ . . Մարդ . . , երկրորդ ուղեւորութիւնը կատարել տուէք (1) » :

Նուիրեալը վերաւորեն կամ անհանդիստ ընեն . մերթ ծանր եւ մերթ շուտ քալեցընելու է . ատեն ատեն ստորերկրեայ տեղերէ անցունելու պէս ծռել տալու է . փոսի վրայ է ցատկել տալու պէս ձեւացընելու է . վերջապէս անկանոն կերպով մը զինքը քալեցընելու է , այնպէս որ չկարենայ կոխած տեղին ինչ բլլալը հասկընալ : Կարկուտ որոտում ձեւացընելու է , որպէս զի նուիրելոյն սրտին քիչ մը վախ ազդէ : Ի դարձին առջի եղած տեղը զինք նրստեցընելու է :

(1) Երկրորդ ուղեւորութիւն : Ասոր մէջ նուիրեալն առաջ-

ԵՐԿՐՈՐԳ ՈՒՂԵՆՈՐՈՒԹԻՒՆ

Մեծ . . . « Այս երկրորդ ուղեւորութիւնն ի՞նչ խորհրդածութիւն ազդեց ձեզ » :

Պատասխան . . .

Մեծ . . . « Այս երկրորդ ուղեւորութեան մէջ առաջինէն քիչ դժուարութիւններ եւ արդեւ ըններ դասը , որ կը նշանակէ թէ առաքինութեան ճամբուն մէջ մարդ ո՛րչափ առաջ երթայ , այնչափ ճամբան կը դիւրանայ : Օգնութեան շնորհիւ որ լսեցիք՝ կը ձեւակերպէ այն պատեւրազմները՝ որ մարդս հարկադրեալ է ընել զինքը պաշարող եւ իր վրայ տիրել ուղղ կրից յաղթելու համար : Չեռքերնիդ ջրի մէջ թաթխեցին . այս ալ ձեր հոգւոյն մաքրութեան պատկերն է » :

« Վարո՛ն , արդէն բաւական դժուարութիւններու յաղթեցիք . ասիկա բարեյաջող նշան մ'է տակաւին կրելիք փորձերնուդ համար » :

« Յօժարութիւն կ'ըզա՞ք երրորդ ուղեւորութիւնն ալ կատարելու » :

Պատասխան . « Այո՛ , կը կատարեմ » :

Մեծ . . . « Որովհետեւ այդպէս է , երրորդ ուղեւորութիւնը կատարել տուէք նուիրելոյն » (1) :

Նոյն մէջ հանդիպած խոչընդոտները չգտնեցիք . միակ լսած ձայնն է՝ սուրբու շառաչիւն եւ խուլ ազմուկ մը : Երեք անգամ Օթ . . . ին բոլորտիքը դառնալէն ետքը , Եղբ . . . Մարդ . . . անոր ձեռքը երեք այլեւայլ անգամ ջրով լեցուն ամանի մը մէջ կը խօթէ : Մարդ . . . նուիրեալն իւր աթոռին վրայ նստեցնելէն վերջը կըսէ . « Նորինձայն իւր երկրորդ ուղեւորութիւնը կատարեց » :

(1) Երրորդ ուղեւորութիւն : Այս երրորդ ուղեւորութիւնը բաւթեամբ եւ մեծաքայլ պիտի կատարուի . պաշտօնակատարը նուիրելոյն ետեւէն պիտի երթան ու զայն երեք անգամ բոցերով շրջապատեն : Նուիր . . . իր տեղը դառնալէ ետեւ՝ Եղբ . . . Մարդ . . . կըսէ . « Մեծ . . . , երրորդ ուղեւորութիւնը բնցաւ » :

ԵՐՐՈՐԴ ՌԻՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Մեծ .°. կրսէ . Պարո՛ն , հարկաւ նշմարեցիք որ այս ուղեւորութիւնն առաւել եւս դիւրութեամբ կատարեցիք : Այդ դիւրութիւնը առաքինութեան ճամբուն մէջ յարատեւելնուդ արդիւնքն է : Չեղ շրջապատող բոցերը՝ որոց մէջէն անցաք , ձեր մարքուելուն լրումն են . երանի՛ թէ այս նիւթակէն կրակը կարենայ ձեր սրտին մէջ մշտապառ պահել ձեր նմաններուն սէրը . մարդասիրութիւնն ուղղէ ձեր խօսքերն ու դործքերը . երբէք չի մոռնաք այս վսեմ բարոյականի պատուէրը « Թէ մի ընէք ուրիշին ինչ որ չէք ուզեր ուրիշները ձեզ ընեն » :

Չեր ուղեւորութեանց մէջ ցուցըցած արիութիւննիդ կը յուսացընէ մեզ թէ ասկէ ետեւ կրելիք փորձերնուդ ալ նոյնպէս պիտի դիմանաք : . . . Պուզէ՞ք յարատեւել , Պարո՛ն » :

Պատասխան

Մեծ .°. « Չեր դադանապահութեանը երաշխաւորելու համար խոստում մը պիտի պահանջենք ձեզնէ : Այն խոստումն անձամբ պէտք է գրէք եւ ձեր արիւննոջն ալ ստորագրէք . կը հաճի՞ք » :

Նուիր .°. « այո՛ » պատասխանելէն ետեւ , Մեծ .°. կրսէ . « Արնդունինք ձեր այդ խոստումները , եւ երբ որ հարկ ըլլայ՝ դործագրութիւնը պիտի պահանջենք » :

Մեծ .°. « Եղբ .°. Սարդ .°. , դառնութեան բաժակը մատուցէք Օտ .°. ին՛ » :

Օտ .°. ըր խմելէն ետեւ .

« Պարո՛ն , այս ըմպելիքն իւր դառնութեամբը խորհրդաւոր նշան մ'է մարդկային կեանքէն անբաժանելի եղած վշտաց , դորս Նախախնամութեան կամաց անձնանուէր հպատակութիւնը միայն կրնայ քաղցրացընել » :

Մեծ .°. « Պարո՛ն , դուրս պիտի ելնէք , որպէս զի ժողովը ձեր առեւած պատասխաններուն արժէքը կշռէ : Ինչ որ ալ ըլլայ ժողովին որոշումը , պէտք է խօսք տաք որ բը .

նաւ չի պիտի յայտնէք ինչ որ տեսաք ու ըսեցիք մեր մէջ ” :
“ Աերդնո՞ւք ” :

Մեծ . . . “ Աուիրեալն այս շրջափակէս դուրս տա-
րէք ” :

Հրամանը կը կատարուի . եւ երբ ‘ Աուիր . . . դուրս ել-
նէ , Մեծ . . . բաղխուն մը տարով կըսէ . “ Աղբ . . . բք իմ ,
կանոնաց պահանջման համեմատ քուէտուփը պիտի շրջա-
բերի .

Քուէարկութիւնը կատարուելէն ետեւ , Մեծ . . . քը-
ուէից արդիւնքը կը ծանուցանէ , եւ եթէ նպատաւոր ըլ-
լայ , հրաման կուտայ որ ‘ Աուիր . . . ներս բերուի . Աթէ
քուէից արդիւնքը նպատաւոր չըլլայ , ընդունելութիւնը
եւ կը մնայ :

‘ Աուիր . . . երբոր ներս բերուի , Մեծ . . . իրեն կը ծա-
նուցանէ թէ Ուխտին անդամակցաց հաւանութեամբը քիչ
ատենէն երգում ընելու պիտի կոչուի :

“ Պարո՛ն , մեր պարտաւորութեանց մէկը կատարելու
վայրկեանն ահա հասաւ : Մեր ուխտին մէջ դժբաղդ Որմ-
նադիրներ , պրինքեր ու որբեր կան , որոց օգնելու պարտա-
կան ենք : Ուխտիս անդամներէն մէկը ձեզ պիտի զրկեմ ,
որուն ցած ձայնով պէտք է ըսէք ինչ որ նոյն տարաբաղդ-
ներուն օգնութեան համար կուզէք տալ այսօր :

“ Պէտք է գիտնաք թէ Որմնադիրներուն բարեգործու-
թիւններն անձնացոյց սնապարծութեան դործեր չեն՝ որ
տուողը հպարտացնեն եւ ընդունողը նուաստացնեն , ուստի
պէտք է միշտ ծածուկ մնան . ձեր դիտաւորութիւնը ցած
ձայնով իմացուցէք Աղբ . . . Հիւրախնամին որ մեզի հա-
չիւ տայ : Աղբ . . . Հիւրախ . . . , կատարեցէք ձեր պաշտօնը ” :

Մեծ . . . “ Պարո՛ն , շնորհակալ եմ ձեզ յանուն այն
տարաբաղդներուն՝ որոց օգնելու կ’օժանդակէք մեզ ” :

Մեծ . . . “ Ուրք ելէք , եւ ՚ի կարգ , Աղբ . . . բ իմ . . .
“ Աղբ . . . Մարդ . . . , ‘ Աորբնձ . . . սեղանին առջեւ բե-
րէք որ երգնու ” :

Երբոր սեղանին առջեւ դայ, ձախ ձեռքը կարկին մը կը տրուի որուն ծայրերուն մէկը դէպ 'ի կուրծքին ձախ կողմը դարձած է . աջ ձեռքը սուրի մը սայրին կը դպչի, որ խոտորնակի սեղանին վրայ դրուած է կանոնագրքին հետ . ձախ ծունկը գետինը դնել կը տրուի եւ աջ ծունկն ալ 'ի ձեւ անկիւնաչափի :

Մեծ .° . կրտէ . « Պարո'ն , ձեր ընելիք երգումը բնաւ չդպչիր այն յարդանաց' զոր ամենքս ալ պարտաւոր ենք ընծայել մեր կրօնքին . նոյնպէս բնաւ չդպչիր այն սիրոյն ու հաւատարմութեան որ կը պատշաճի Տէրութեան օրինաց . ոչ ալ այն ակնածութեան' զոր Եւրաքանչիւր ոք պէտք է ընծայէ բարի վարուց եւ սովորութեանց : Այս երգումը ծանր է , եւ պէտք է որ ձեր կատարեալ ազատութեամբը մատուցանէք : Աը հաճի՞ք » :

Եթէ հաճի, Մեծ .° . կը յաւելու . « Երգման ձեւը պիտի կարդամ ձեզ , եւ յետոյ դուք ալ «Վերդնում» պիտի ըսէք (1) :

ԵՐԴՈՒՄՆ

« Վերդնում եւ կը խոստանամ առաջի Մեծի Ղարտարապետին Տիեզ .° . ց եւ այս սուրիս վրայ' որ պատուոց նշանակն է , անդրժեղի պահել այն ամեն դաղտնիքը' որ այս Աանոն .° . Օթ .° . էս ինձ աւանդուին , ինչպէս նաեւ հոս տեսածս ու լածս . եւ ասոնցմէ բնաւ բան մը չգրել' մինչեւ որ յատկապէս հրաման մ'ընդունած չըլլամ , եւ այն ալ ինձ նշանակուելու կերպով :

« Աը խոստանամ սիրել Եղբ .° . ներս եւ կարողութեանս համեմատ օգնել անոնց :

« Դարձեալ կը խոստանամ հնազանդիլ ուխտիս սահմանադրութեան եւ ընդհանուր կանոնաց , նոյնպէս եւ այս յարդելի Օթ .° . իս մասնաւոր կանոններուն » :

« Աը հաճիմ որ եթէ երգմնազանց ըլլամ , յանձն առ-

(1) Մեծ .° . բարձր եւ հասկնալի ձայնով կը կարդայ :

նում եւ կրեմ այն ամեն պատիժները՝ որք Արմնադրական օրինաց համեմատ ինձ տրուին, եւ իմ յիշատակս ամեն Արմնադրաց ատելի ըլլայ ։

Մեծ Տարա . . . Տիեզ . . . օգնէ ինձ ։

Բոլոր Եղբ . . . ք « Եմեն » կըսեն (1) ։

Մեծ . . . « Պարոն, ըրած երդումնիդ չի՞ վրդովեր ձեր սիրտը ։ Հաստատ պահելու զօրութիւն կ'զգա՞ք ձեր վրայ ։ Աը հաճի՞ք նոյնը վերատին կրկնելու՝ երբոր լոյսն ընդունիք ։

« Եյո՞ւ » պատասխանն առնելէ ետեւ, Մեծ . . . կըսէ Ե. Դ. . . ին. « Ենչ կը խնդրէք () ա . . . ին համար ։

Ե. Դ. . . կը պատասխանէ . « Եյս ։

Մեծ . . . կըսէ . « Եյսը պիտի տրուի անոր, եւ դուք ամենքդ, Եղբ . . . ք իմ, ձեր պարտքը կատարեցէք (2) ։

Մեծ . . . կըսէ . « Պարոն, դէպ 'ի ձեզ ուղղուած սուրբերը կը ծանուցանեն ձեզ թէ դժուար պարագաներու մէջ գտնուած ժամանակնիդ ամեն Արմնադիրք օգնութեան պիտի հասնին ձեզ, եթէ մեր օրէնքներն յարգէք ու խղճի մըտօք պահէք ։ Միանգամայն կը ծանուցանեն ձեզ թէ մեր մէջ ուրիշ բան չէք կրնար դանել, բայց եթէ Արմն . . . թեան եւ առաքինութեան վրէժխնդիրներ, եւ թէ միշտ պատրաստ պիտի ըլլանք երդմնազանցութիւնը պատժելու՝ եթէ

(1) Երդումն արտասանուելէն ետեւ, Նուիր . . . երկու Դ. . . բուն մէջ տեղը կը տարուի ։

(2) Բոլոր Եղբ . . . ք ոտքի վրայ կեննն սուրբերը ձեռուքնին, որոց ծայրն առ Նուիր . . . ն ուղղուած ։ Մեծ . . . երեք հարուած կուտայ կովիչով . Եղբ . . . Մարդ . . . Նորընծ . . . յին աչքի կապը վար կառնէ . նոյն վայրկենին պայծառ լոյս մը կարճկուի, որ երեք անգամ Նորընծ . . . կը պատէ ։ Վայրկեան մը լուսիկնէ ետեւ, որ Նորընծ . . . յին ժամանակ կուտայ իր շուրջը պատած տեսարանը դիտելու .

երբէք այդ յանցանքը գործէք : « Եղբ . . Մարգ . . , 'Նորընծ . . մտ բերէք » (1) :

ՊԱՏՃԵՆ ԸՆԳՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ

« Ի վառս Մեծի Ճարս . . ին Տիեզ . . ց , յանուն եւ ընդհովանեալ Մեծի Մրեւ . . եց Գաղղիոյ , զորութեամբ իշխանութեանց որ ինձ տուեալ են , կարգեմ եւ հաստատեմ զձեզ Մ . . կերտ Որմնագիր գործաւոր անդամ Կանոն . . Օթ . . ի Սուրբ Յովհաննու յատուկ տիտղոսիւ Մ . . յՄրեւ . . Ը . . » :

'Նորընծ . . սորի վրայ երնելէ ետեւ , Մեծ . . խորհրդաւոր երեք թուով զայն կը համբուրէ ու կըսէ .

« Եղբ . . իմ , որովհետեւ այսպէս պիտի կոչենք ձեզ այսուհետեւ , ընդունեցէք այս գոգնոցը՝ որ ամենքս կը կրենք , եւ զոր ամենէն մեծ մարդիկ իրենց պատիւ համարած են կրել . ստիկա աշխատութեան խորհրդանշանն է . կը յիշեցընէ ձեզ թէ Որմ . . մը միշտ գործունեայ եւ աշխատասէր կեանք պէտք է վարէ :

« Մտիկա կրաւունք կուտայ ձեզ մեր մէջ նստելու , եւ մինչեւ որ վրանիդ չունենաք՝ պէտք չէ որ այս տաճարիս մէջ ներկայանաք : (Յետոյ զոյգ մը ձեռնոց տալով անոր) .

« Ընդունեցէք այս ձեռնոցները . ասոնց սպիտակութիւնը կը սփրեցընէ ձեզ թէ ամեն Որմնագրաց սրտին մէջ անկեղծութիւն կը տիրէ , եւ թէ ձեր ամեն գործերը պէտք է անարատ ըլլան » :

(1) Նուիրեալն աջ կողմը եղբ . . Մարգ . . եւ ձախ կողմն ալ եղբ . . Աբար . . պեան ունենալով սեղանին առջեւ կը տարուի , առջի անդամին պէս ծուր կը դնէ , եւ երգման պատճէնը երկրորդ անգամ Մեծ . . կարգալէ ետեւ , երգումը կը կրկնէ :

Մեծ . . իր կտիիչը երեք անգամ թեթեւ կերպով կը զարնէ կարկինին դիտուն , եւ կըսէ : « Այս կարկինին ճշգրտեան համեմատ ձեր ամեն քայլերն 'ի բարին ուղղել սովորեցէք » :

Մեծ . . Նուիր . . ին ձեռքին ներքեւէն սուրբ կը քաշէ , սայրն անոր վրտուն վրայ կը դնէ եւ ընդունելութեան պատճէնը կը կարդայ :

« Մեր խորհուրդներուն մէջ կին չենք ընդունիր , բայց անոնց առաքինութիւնը մեծարելով յիշատակը միտքերնիս բերել կը սիրենք . այս ձեռնոյցները պէտք է տաք այն կնոջ՝ զոր ամենէն աւելի կը յարգէք » :

« Եղբ . . իմ , մենք զիրար ճանչելու համար բառեր նշաններ եւ շօշափումներ ունինք : Այն բառը զոր մեք նուիրական կը կոչենք (Ա . . .) է , որ Սողոմոնի տաճարին մէջ դըրուած պղնձէ սիւնի մը անունն է , եւ կը նշանակէ զօրութիւն » :

« Երբ մէկն այս բառը ձեզ հարցնէ , այսպէս պէտք է պատասխանէք » : « Ինծի թոյլ տրուած չէ զայն արտասանել կամ գրել , միայն կրնամ հեղեւ ձեզի հետ . տուէք առաջին գիրը , ես ալ երկրորդը տամ ձեզ , եւ այլն » :

« Ենցախօսքն է հիմա վեցամսեայ կրկնակ բառը , որ ամեն վեց ամիս Պաղղոյ Մեծ Երեւ . . . ից կողմէն կը նորոգուի : Եթեման խօսքն է . . . : Ամեն անգամ որ կանոնաւոր Օթ . . . ի մը այցելութեան երթաք՝ պէտք է որ սոյն անցախօսքը տաք » :

« Նշանն այսպէս կը տրուի (նշանը կուտայ) , այս նշանը կրկորդային կըսուի եւ կը յիշեցնէ ժամանակաւ « Երբնմ . . . էն պահանջուած այն երդումը թէ կը հաճի որ իր փողը կտրուի՝ քան թէ երգմնազանց ըլլայ » :

« Շօշափումը կը կատարուի ալ ձեռքին բութ մատը փոխադարձաբար դիմացինին ալ ձեռքի ցուցամատին առաջին յօդակապին վրայ տանելով եւ աննշմարելի կերպիւ երեք հարուած տալով , երկուքն արագ եւ մէկը ծանր » :

Մեծ . . . վերստին եղբայրական համբոյրը կուտայ՝ Երբն . . . ին , եւ Եղբ . . . Մարդ . . . ին կը պատուիրէ որ զայն Եղբ . . . Պ . . . երուն քոյր տանի , որպէս զի ճանչեն զինքը , եւ Օթ . . . ին մէջ քայելու եղանակն իրեն սովորեցնեն :

Եյս դործը կատարուելէ ետեւ , Եղբ . . . Ե . . . Պ . . . կոփելովն անգամ մը կը զարնէ եւ կըսէ . Մեծ . . . , խօսքերը նշաններն եւ շօշափումները կատարեալ են » :

Մեծ . . . նոր ընդունուած Եղբօր խօսելով :
Եղբ . . . իմ , Հիւսիսային Սիւնակին առջեւ շարուած

Եղբ . . . ներուն ծայրի տեղը պիտի նստիք : Չեղ արուած
ատտիճանին մէջ ձեր նստելու տեղն այն է : Չանացէք որ
մեր աշխատութեանց հանապաղ ներկայ դանուելով եւ
երդմամբ խոստացած Որմնագրական առաքինութիւնները
կատարելով՝ արժանի ըլլաք մեր խորհրդոց մէջ աւելի ա-
ռաջ թափանցել եւ ընդունիլ այն շնորհները, զոր Օթ . . .
չղանար երբէք անոնց՝ որ գիտեն ինքզինքնին արժանայնել » :

Մեծ . . . Երեք հարուած կուտայ եւ կրտէ :

« Եղբ . . . ք. Ե. եւ Բ. Դ . . . ք, ձեր սեփական Միւնակ-
ներուն առջեւ շարուած Եղբ . . . ներն հրաւիրեցէք որ այ-
սուհետեւ Ե. 2 . . . աի Եստ . . . աւ դործաւոր անդամ ճան-
չեն Յարդ . . . Օթ . . . իս Երեւ . . . Լ. Եղբ . . . Ե . . . ք,
եւ ինձ ու ձեզ հետ միանան անոր ընծայումը ծափահա-
րելու » :

« Ե. իս, Եղբ . . . ք իմ, նշանաւ եւ բախմամբ » :

Նուիր . . . օգնութեամբ Եղբ . . . Երար . . . աին շնոր-
հակալ կըլլայ :

Մեծ . . . Եղբ . . . Երար . . . պետ, նոր ընդունուած

Եղբ . . . իրեն յատկացեալ տեղը տարէք » :

Երբ որ հոն հասնին, կրտէ անոր. « Եղբ . . . նորընծայ,
Եղբ . . . Ետեն . . . սը ձեր տեսածներուն ու լսածներուն
մեկնութիւնը պիտի տայ ձեզ, որոց խորհրդաւոր նշանա-
կութիւնը թերեւս 'ի սկզբան չի կրցաք հասկընալ » :

« Եւ ուշադրութիւն ըրէք. այս խորհրդանշանները
ճշմարտութիւններ կը ծածկեն, զորս հարկ է գիտնաք, վա-
սըն զի այն ճշմարտութեանց գիտութենէն պիտի բղխին ա-
մեն լոյսերը՝ զորս ստանալու կոչուած էք » :

« Բայց նախ ետ առէք ձեր զարդեղէններն ու մետաղ-
եայ նիւթերը՝ զորս ձեր վրայէն վերուցին՝ հասկըցընելու
համար թէ մեր մէջ մտնելու փափաքողը պէտք է մաքուր
եւ ամեն կիրքէ ազատ ըլլայ :

« Եղբ . . . Երար . . . պետ, նոր Եղբ . . . օր զարդեղէն-
ներն ու մետաղներն իրեն դարձուցէք » :

(Բարեգործութեան դանձանակն եւ առաջարկութեանց քսակը կը շրջաբերին) :

Հոս Եղբ . . . Ետեն . . . սը նոր ընծայեալներուն ուղղած ճառին մէջ՝ Արմնագրութեան պատմութիւնը, խորհրդանշանները, սկզբունքն ու նպատակը համառօտիւ կը ծրագրէ :

Հ Ր Ա Ն Ա Ն Գ

Մեծ . . . « Եղբ . . . , մեզ իրարու հետ միացնող կապը ո՞րն է :

Պատասխան . Ազատ Արմնագրութիւնը :

1. Ի՞նչ է ազատ Արմնագրութիւնը :

Պ. Մարդասիրական, փիլիսոփայական եւ յառաջդիմական մարդ մըն է, որուն հիմունքն են Աստուծոյ էութիւնն ու հոգւոյ անմահութիւնը . առարկայներն են բարեգործութիւնը, տիեզերական բարոյականի գիտութեանց եւ արհեստից ուսմունքը, եւ ամեն առաքինութեանց կիրառութիւնը :

1. Դուք Արմնագիր էք :

Եղբ . . . քս զիս այնպէս կը ճանչեն :

1. Ի՞նչ է Արմնագիր մը :

Պ. Ազատ եւ բարի վարքով մարդ մը, հաւասարապէս բարեկամ ազգասին եւ հարուստին, եթէ առաքինի են :

1. Ի՞նչ ընելու կուգար Օթ . . . ք :

Պ. Կիրքերուս յաղթել, կամքս նուաճել, եւ Արմնագրութեան մէջ յառաջդիմել սովորելու :

1. Ո՛ւր ընդունուեցար Արմնագիր :

Ուղիղ եւ կատարեալ Օթ . . . ի մը մէջ :

1. Օթ . . . մը կատարեալ ըլլալու համար ի՞նչ պէտք է :

Պ. Երեք կը կառավարեն զայն, հինգ կը լուսաւորեն, եօթն ուղիղ եւ կատարեալ կընեն :

1. Երեքը որո՞նք են :

Մեծ . . . եւ երկու Դ . . . ք :

1. Երբէ՞ն ՚ի վեր Արմնագիր էք :

- Պ. Դոյսն ընդունելէս 'ի վեր :
- Ը. Ինչէ՞ն ճանչեմ որ դուք Որմ . . . էք :
- Պ. Իմ նշաններէս , խօսքէս եւ շօշափումէս :
- Ը. Որմնադրաց նշաններն որո՞նք են ,
- Պ. Որդաշափ , հարթաշափ եւ կարակն :
- Ը. Տուէք ինձ նշանը :
- Պ. (Նշանը կուտայ :)
- Ը. Եյս նշանը ի՞նչ կը նշանակէ :
- Պ. Թէ աւելի կընտրեմ որ պարանոցս կտրուի՝ քան թէ Որմնադրաց դաղունիքը յայտնեմ :
- Ը. Շօշափումն հաղորդեցէք Եղբ . . . Ե. Դ . . . ին :
- Ե. Դ . . . ը շօշափումն ընդունելէ ետեւ կըսէ .
« Շիշտ է , Մեծ . . . » :
- Ը. Օրուցեցէք ինձի խօսքը :
- Պ. Միայն հեղեղ կընամ . ըսէք ինձ առաջին գիրը , երկ , ըրորդ կըսեմ ձեզ . (կը հեղեն)
- Ը. Ի՞նչ կը նշանակէ այս բառը :
- Պ. Օրութիւն : Սողոմոնի տաճարին շիւսիսային կողմը դբուած պղնձէ սիւնին անունն է , որուն քով Եշ . . . ք իրենց թոշակը կընդունէին :
- Ը. Ինչո՞ւ Որմ . . . ք երեք թիւը կը դործածեն իրենց բախմանց , ձայնարկութեան եւ քալելու եղանակին մէջ եւ իրարու համբոյր տուած ատեննին :
- Պ. Այսան զի երբեակ թիւն աստուածութեան ստորոգելեաց արտայայտութիւննէ , որք են անսահմանութիւն , յաւիտենականութիւն , ամենազօրութիւն . ասկեց զատ եռանկիւնին մէջ ալ կը գտնուի , որ Լէ . հովային խորհրդանշանն է :
- Ը. Ի՞նչ է ձայնարկութիւնը :
- Պ. « Նուզէ » :
- Ը. Ի՞նչ է ընթացքը :
- Պ. Չախ ոտքէն սկսելով երեք քայլափոխ :
- Ը. Չեր Օթ . . . ի՞նչ ձեւ ունի :

- Պ. Օւղագհեւական ուղղանկիւն :
- Ի. Ի՞նչ գիրքով է երկայնութիւնը :
- Պ. Երեւելքէն Երեւմուտք :
- Ի. Լայնութիւնը :
- Պ. Հարաւէն Հիւսիս :
- Ի. Բարձրութիւնը :
- Պ. Օէնիթէն Նատիր, այսինքն երկրիս մակերեւութէն մինչեւ յանդրութիւն :
- Ի. Եյս տարածութեան չափերն ի՞նչ կը նշանակեն :
- Պ. Թէ Որմնադրութիւնը Տիեզերական է :
- Ի. Ինչո՞ւ ձեր Օթ .՝ ին գիրքն Երեւ .՝ էն Երեւմ .՝ ք սահմանեալ է :
- Պ. Սան զի Որմնադրութիւնը՝ արեւուն առաջին ճառագայթներուն պէս Երեւ .՝ քէն եկած է մեզ :
- Ի. Օթ .՝ ըսելով ի՞նչ կը հասկընար :
- Պ. Օթ .՝ կը կոչենք այն գաղտնի տեղը՝ ուր Որմ .՝ Եղ .՝ ք կապաստանին իրենց աշխատութիւնները ծածկելու համար :
- Ի. Չեր Օթ .՝ ինչի՞ վրայ կը թնամ է :
- Պ. Երեք մեծ Սիւներու, որք « Իմաստութիւն Ուժ եւ Գեղեցկութիւն » կը կոչուին, եւ որոց խորհրդաւոր ներկայացուցիչներն են Սեծ .՝ եւ երկու Դ .՝ ք :
- Ի. Ինչո՞ւ ինքզինքնիդ Որմնադիր ընել տուիք :
- Պ. Սան զի խաւարի մէջ էի եւ լուսոյ փափաքեցայ :
- Ի. Ո՞չ ներկայացուց ձեզ Օթ .՝ ին :
- Պ. Բարեկամ մը զոր յետոյ Եղք .՝ ճանչեցի :
- Ի. Ի՞նչ վիճակի մէջ էիք երբոր ձեզ ներածեցին :
- Պ. Ոչ մերկ, ոչ հագուած, բայց պարկեշտ վիճակի մը մէջ եւ զուրկ ամեն մետաղեայ նիւթերէ :
- Ի. Ինչո՞ւ այդ վիճակին մէջ :
- Պ. Ոչ մերկ, ոչ հագուած, անմեղութեան վիճակը ներկայացընելու եւ յիշեցընելու համար թէ առաքինութիւնը զարդուց պէտք չունի. զուրկ ամեն մետաղ-

եայ նիւթերէ , վասն զի անոնք շատ անգամ նշանակ
եւ առիթ են մտլութեանց՝ որոցմէ ամեն Որմնադիր
պէտք է խորշի :

Գ. Ի՞նչպէս Օթ . : . կը մուծուեցար :

Գ. Երեք մեծ կոփմամբ :

Գ. Եւ յէ երեք մեծ կոփիւնն ի՞նչ կը նշանակեն :

Գ. Խնդրեցէք եւ տացի ձեզ , հայեցեցէք եւ դաջիք ,
բաղխեցէք եւ բացցի ձեզ :

Գ. Ենկէ ետեւ ի՞նչ պատահեցաւ ձեզ :

Գ. Օ՛հնաղան փորձեր կրելէս վերջը , Եղ . : . ցս հաւա
նութեամբ Օթ . : . ին Մեծ . : . ն զիս Որմ . : . ընդունեց :

Գ. Ի՞նչ ըրիք այն ատեն :

Գ. Ուխտին դաղանիքը պահելու խոստմունք տուի եւ
երդմամբ հաստատեցի :

Գ. Լոյսն ընդունած ժամանակնիդ ի՞նչ տեսար :

Գ. Երեգակը , Լուսինը եւ Օթ . : . ին Վահակալը :

Գ. Ի՞նչ խորհրդաւոր յարաբերութիւն կայ այդ աստ
ղերուն եւ ձեր Օթ . : . ին Վահակալին մէջ :

Գ. Ինչպէս որ արեգակը կը նախագահէ ցերեկին եւ լու
սինը գիշերին , նոյնպէս եւ Վահակալը կը նախագա
հէ Օթ . : . ին , որպէս զի լուսաւորէ :

Գ. Ձեր Օթ . : . ին Վահակալն ո՞ւր կը կենայ :

Գ. Երեւելք :

Գ. Ինչո՞ւ :

Գ. Ինչպէս որ արեգակն Երեւելքէն կը ծագի օրուան
ընթացքը բանալու համար , նոյնպէս Վահակալն ալ
Երեւելք կը կենայ Օթ . : . կը բանալու եւ դորձա
ւորներն աշխատցընելու համար :

Գ. Ո՞ւր կը կենան Պ . : . ք :

Գ. Ե . Պ . : . ք շիւսիսային Արեւակին եւ Բ . ք շա
րաւային Արեւակին առջեւ , որպէս զի Մեծ . : . ին
աշխատութեանցն օգնեն , դորձաւորաց աւուրչէքը
վճարեն եւ զանոնք դոհութեամբ արձկեն :

- Ն. Ո՛ւր կը կենան Աշ . . ք :
- Պ. Հիւսիսային կողմը որ ամենէն քիչ լուսաւորեալ տեղը կը ներկայացընէ , վասն զի Որմնադրութեան մէջ գեռ կատարեալ վարժուած չեն :
- Ն. Որմնադրաց գործն ի՞նչ է :
- Պ. Աստուած պաշտել , իրենց նմաններուն բարիք ընել , նախապաշարմանց դէմ մարտնչիլ , եւ ինքզինքնին աւելի կատարելագործելու աշխատիլ :
- Ն. Վրանի՞ տարեկան էք :
- Պ. Արեք :

ՓԱԿՈՒՄՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

- Ն. Որմնադիրք ժամը քանի՞ն սովոր են իրենց աշխատութիւնները վաւկել :
- Պ. Կէս գիշերին :
- Ն. Ժամը քանի՞ն է :
- Պ. Կէս գիշեր է :

Մեծ . . . « Որովհետեւ կէս գիշեր է , եւ այն ժամուն Ուր . . ք սովոր են իրենց աշխատութիւնները գոցել , Ա . եւ Բ . Դ . . . Աղբ . . ք , հրաւիրեցէք երկու սինակաց եղբայրները որ օգնեն ինձ կանոն . . Ս . . Օթ . . իս Աշ . . ի աստիճանին գործերը սովորական խորհրդներով գոցելու :

Դ . . ք ազդարարութիւնը կրկնելէ ետեւ , Մեծ . . կօրիչովը երեք անգամ կը բաղխէ . Դ . . ք կը կրկնեն . ամեն Աշ . . քբ ոտքի վրայ կեննեն , կարգի կը կենան , եւ Մեծ . . կրտէ . « Ա . եւ իս , Աղբ . . ք իմ : Ամենն ալ Աշ . . ի նշանը կրնեն , եւ աշխատութիւնները նոյն աստիճանին բախմամբն ու ձայնարկութեամբ կը վերջանան :

Մեծ . . կը յաւելու . « Աշխատութիւնները գոցուեցան . երթանք խաղաղութեամբ , Աղբ . . ք իմ , եւ երդնունք լուծիւն պահելու :



ՍԿՈՎՏԵԱՆ ԾԷՍ

Արարողութիւնն ու հրահանգը գաղղիական ծխին պէս
են՝ բաց ՚ի հետեւեալ սարբերութիւններէն :


Ա. Գ. օ. Եղբ. օ. ք Հիւսիսային սիւնակին առջեւ ,
ևւ Բ. Գ. օ. Եղբ. օ. ք Հարաւայինին առջեւ կը նստին :


Բաղխումք երեք միօրինակ հարուած է :

Չայնարկութիւնը Հուղէ է :

Նուիրական բառն է Պ. օ. փոխանակ Ժ. օ. Ե :

Քայլը ձախ ոտքէն կ'սկսի :





[Faint, illegible handwriting]



177



Տ Ե Տ Ր

ՍԱՏԱՐԻ ԱՍՏԻՃԱՆԻՆ

၇၈၅၃

၂၄၂၀၆၅၀၀၀ ၄၅၅၃၀၀



ՆԵՐՇՐԻՏԵԼԻՒՄ

Ընդհանուր կանոնաց 259 յօդուածին պատուիրած պայմանները կատարող Աշխերտ մը՝ Սատարի աստիճան ստանալու համար պէտք է դրով խնդրէ Օթ .: Էն, այն դիրն ստորագրէ եւ առաջարկութեանց պարկին մէջ ձգէ :

Այս արարողութիւնը պէտք է որ նախընթաց նիստերէն մէկուն մէջ կատարուած ըլլայ միշտ :



ՆԱԽԱՆՆԱԿ

Մեծ .: նուիրեալը երկու Սիւն .: ըուն մէջ տեղը կը կեցընէ, որպէս զի Ա: աստիճանին կըթուլթեան վրայ քըն նութիւն մ'անցունէ 'ի ներկայութեան Աշակերտաց:

Յետոյ նուիրեալը տաճարէն դուրս հանել կուտայ:

Մեծ .: Օթ .: ին դիտողութիւնները խնդրելէ ետեւ՝ դաղմնի քուէարկութեամբ եւ քուէից բացարձակ առաւելութեամբ որոշել կուտայ թէ նուիրակն ընդունուելու արժանի' է: Մտկոզական պարագաներու մէջ 259 յօդուածին համեմատ պէտք է վարուի:

Այս օրինական պայմանները կատարուելէ ետեւ, նուիրեալը պատրաստութեան սենեակը կը տարուի եւ հոն կը կենայ մինչեւ որ երթան զինքը բերեն:

Յետոյ Մեծ .: կը ծանուցանէ թէ Օթ .: ին նիստը Սատարի աստիճանաւ պիտի կատարուի, եւ կը հրաւիրէ Եղբ .: Դ .: երը որ Աշ .: Եղբ .: ները տաճարէն դուրս հանեն:

Այս միջոցին տաճարը Սատարի Օթ .: կի ձեւով պէտք է զարդարուի:

ԶԱՐԴ ՕԹ . : . ԿԻՆ

ՕԹ . : . կը Մ. : . և Մ. : . և Մ. : . նին պէս կը զարդարուի , հետեւեալ տարբերութեամբ :

Խորհրդաւոր տախտակը տաճարին մէջ տեղը կը դրուի :

Մ. : . տախտակը պէտք է ներկայացնէ .

1.՝ Տաճարին սանդուղին եօթն աստիճանները եւ անոր սրահին միւսիմաստը սալայատակը :

2.՝ Նբիւ սիւները՝ Ա. եւ Ժ. խոյակներուն բարձրութեամբ եւ երկու սիւններուն մէջ տեղը բաց կարկին մը երկու ծայրերն ՚ի վեր :

3.՝ Ժ. սիւնին ձախ կողմը կը դրուի անտաշ վէմը , կուփիչը , մկրատը , ազցանն ու կանոնը . Ա. սիւնին ալ կողմը կը դրուի խորանարդ բրդածեւ վէմը , եւ այս երկու սեանց բուններուն մէջ տաճարին դուռը :

4.՝ Ժ. սիւնին խոյակէն վեր ուղղորդը , իսկ Ա. սիւնէն վեր հարթաչափը :

5.՝ Տախտակին վերի կողման մէջ տեղը պէտք է նկարուած ըլլայ ուղղաչափ մը , ալ կողմը արեւը , ձախ կողմը լուսինը , եւ լուսինն շրայ գծագրութեան տախտակը :

6.՝ Ա երի մասին մակարդակը աստեղազարդ երկինք մը պէտք է ներկայացնէ եւ բոլորը մէկէն ասղնեգործ վերջաւորներով շրջապատեալ պէտք է ըլլայ :

7.՝ Նբեք ալ պատուհան պէտք է նկարուի . առաջինը Մ. : . լից կողմը , երկրորդը Մ. : . ակց , երրորդը Մ. : . արաւի կողմը .

8.՝ Ինչոպիսոյլ աստղը , որուն մէջ տեղը G մը կայ :

Մ. : . արաւային սիւնն այն կերպով պէտք է լուսաւորեալ ըլլայ , որ թափանցիկ G մը տեսնուի . նոյնպէս բոցափայլ աստղն ՕԹ . : . կին ձեղունին շրայ պէտք է տեսնուի աստեղազարդ երկնից մէջ՝ եթէ կարելի է . ապա թէ ոչ Մ. : . լից ամպստիանւոյն ներքեւ :

ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

Մեծ .: հարուած մը կը բաղկէ զոր Պ .: ք կը կրկնեն եւ կրսէ . « Եղբ .: ք, սաք ելէք եւ 'ի կարգ » :

« Ե. եւ Բ. Պ .: Եղբ .: ք, ստուգեցէք թէ ձեր սիւնակաց առջեւ գտնուող բոլոր Եղբ .: ք Ս .: ր են » :

Պ .: ք սիւնակաց առջեւ պտըտելով աչքէ կանցունեն, եւ իւրաքանչիւր Եղբ .: ք կը հարցընեն Ս .: րի Աստ .: նին բառերը նշաններն ու Շ .: քը :

Պ .: ք իրենց քննութիւնը կատարելէ ետեւ՝ տեղերնին կը դառնան եւ իրենց պաշտօնին համարը կուտան Մեծ .: նն :

Մեծ .: . « Նմանապէս Արեւ .: ւ ք գտնուող Եղբ .: ք :

Յետոյ Մեծ .: փոփոխակի հետեւեալ հինգ հարցումները կրնէ Պ .: րուն :

1. Եղբ Ե. Պ .: , դու Ս .: ր ես :

Պ. Այո :

2. Ինչու համար ինքզինքդ Ս .: ր ընդունել տուիր :

Պ. Ե գիրը ճանչելու համար :

3. Քանի՞ տարեկան ես :

Պ. Հինգ տարեկան :

4. Ս .: րք ժամը քանի՞ն գործի կըսկսին :

Պ. Կէս օրին :

5. Ժամը քանի՞ն է :

Պ. Կէս օր է :

Մեծ .: . « Որովհետեւ կէս օր է եւ այն ժամուն Ս .: րք սովոր են իրենց Աշխ .: րք սկսիլ, Ե. եւ Բ. Պ .: Եղբ .: ք, ձեր սիւնակաց առջեւ շարուած Եղբ .: քը հրաւիրեցէք

որ ձեզի եւ ինձի հետ միանալով Ս.՝ ըի աշխատութիւնն
ներն սկսին :

Նշք.՝ Ռ.՝. ք կը կրկնեն սոյն ծանուցումը :

Մեծ.՝ կոփիչովը սեղանին վրայ հինգ հարուած կու-
տայ, երկուքն արագ եւ երեքը ծանր. Ռ.՝. ք կը կրկնեն .
յետոյ Մեծ.՝ կրսէ .

« Առ իս, Նշք.՝. ք իմ, դէմքերնիդ Արեւ.՝. Լ.ք դար-
ձունելով » :

Ամենքը մէկէն նշանը կուտան, յետոյ հինգ բախմամբ
կը ծափահարեն :

Մեծ.՝ կրսէ . « Ս.՝ ըի աշխատութիւններն սկսան » :

Բողբ Նշք.՝. ք իրենց սեփական տեղերը կը նստին :

Ս.՝ ըի աշխատութիւններն այսպէս սկսելէ ետեւ,
Մեծ.՝ խօսքը Նշք.՝. Քարտուղարին կուտայ, որպէս
զի վերջին աշխատութեանց ատենադրութիւնը կարգայ,
որ Ա. աստիճանին ձեւովը վիճաբանութեան կը դրուի ու
կընդունուի :

Վերջը Մեծ.՝ կը ծանուցանէ թէ Նշք.՝. « Ն. . .
Ա.՝. սն արժանի դատուեցաւ Ս.՝ ըի Աստ.՝. ընդու-
ներու, եւ կը հարցնէ թէ Նշք.՝. ըց մէջ այս մասին գի-
տողութիւն ունեցող կայ : Եթէ առարկութիւն կամ գի-
տողութիւն մ'ընող չկայ, քուէտուփը նորէն պըտըացընել
կուտայ. եւ եթէ քուէից բացարձակ առաւելութիւն ըն-
դունուի, Մեծ.՝ կրսէ .

« Նշք.՝. Մարդ.՝, զնա գտիր եւ սովորական կեր-
պով ներս բեր այն Ա.՝. ար՝ որ թողակի առաւելութիւն
կը ինդրէ :

ԸՆԴՈՒՆԵԼ ՈՒԹԻՒՆ

Նուիրեալը պատրաստուած, այսինքն Աշ. ի պէս հաղուած, տաճարին դուռը կը բերուի, զոր Աշ. ի պէս կը բաղխէ :

Եղբ. յ. Դուն. յ. Բ. Գ. յ. ին իմաց կուտայ. ան ալ Ա. Գ. յ. ին կըսէ. « Եղբ. յ. Ա. Գ. յ., տաճարին դուռն Աշ. յ. ի պէս կը բաղխեն » :

Այս ծանուցումը Մեծ. յ. ին կը հաղորդուի, որ կըսէ. « Նայել տուէք ո՞վ է բաղխողը » :

Սոյն հրամանը Ա. եւ Բ. Գ. յ. բուն միջոցաւ Եղբ. յ. Դուն. յ. ին կը հասնի :

Եղբ. յ. Դուն. յ. դուռը կը բանայ եւ կը հարցնէ թէ ո՞վ է բաղխողը :

Եղբ. յ. Մարզ. յ. կը պատասխանէ. « Աշ. յ. մընէ որ Ս. յ. ը ընդունուիլ կը խնդրէ » :

Եղբ. յ. Դուն. յ. դուռը կը դոցէ եւ այս պատասխանը Մեծ. յ. ին կը հասցընէ, որ կըսէ. « Հարցուցէք իրեն թէ իր ժամանակը լրացուցած է եւ թէ իր վարպետն իրմէ դո՞չ է. ստուգեցէք թէ Աշ. յ. ի խօսքերը, նշաններն եւ Աշ. յ. ըը ունի » :

Երբոր դրապէս պատասխան տրուի, Մեծ. յ. կըսէ. « Նուիրեալը ներս մտցուցէք » :

Այն ատեն Եղբ. յ. Մարզ. յ. զայն նորէն տաճարին դուռը կը տանի, ուր Աշ. յ. ի պէս կը բաղխէ :

Եղբ. յ. Դուն. յ. կը ծանուցանէ զայն Բ. Գ. յ. ին որ կըսէ. « Եղբ. յ. Ա. Գ. յ., տաճարին դուռն Աշ. յ. ի պէս կը բաղխեն » :

Եղբ. յ. Ա. Գ. յ. ծանուցումը կը կրկնէ Մեծ. յ. ին, եւ Մեծ. յ. ալ կըսէ. « Եղբ. յ. Ա. Գ. յ., նայեցէք թէ ո՞վ է որ այդ կերպով դուռը կը բաղխէ » :

Այս հարցմունքը նուիրապետական կարգաւ մինչեւ

Եղբ . : . Գոն . : . ին գալէ ետեւ , Եղբ . : . Գոն . : . կըսէ .
« Եղբ . : . Ի . Գ . : . Ե . : . մինէ որ Ս . : . ր ընդունուիլ
կը խնդրէ » :

Օճանուցումը Մեծ . : . ին հասնելով՝ ան ալ կըսէ .

« Հարցուցէք իրեն անունը մականունը եւ տարիքը » :

Պատասխան . « Եղբ . : . Ե . . . Ե . : . ն է , երեք տա-
րեկան , որ Ս . : . ր ընդունուիլ կը խնդրէ :

Մեծ . : . « Ե . : . ի խօսքերը , նշանը եւ Ե . : . քը
ձեզ տալէն ետեւ՝ տաճարէն ներս ընդունեցէք » :

Եղբ . : . Մարդ . : . նշանները խօսքը եւ Ե . : . քը
ընդունելէն ետեւ , նուիրեալին հետ տաճարը կը մտնէ
Ե . : . ի քայլերով , եւ անոր հետ երկու սիւներուն մէջ
տեղը կը կենայ :

Մեծ . : . « Եղբ . : . իմ , դուք Ս . : . ր ըլլալ կուզէք .
Ե . : . ր աստիճանին վրայ դադախար մ'ունի՛ք :

Պատասխան

Մեծ . : . « Ե . : . քերնիդ 'ի լոյս բացուելէն 'ի վեր՝ աշ-
խատութեան գողնոց կապեցիք , դորձաւորի անուն կրելու
հաճեցաք , կառավարիչ իշխանութեան խորհրդանիշն եղող
կոփիչին ձայնովը աշխատեցաք , վերջապէս հասկըցաք որ ա-
մենէն մեծ բաներն ամենէն խոնարհ անունները կը կրէին :
Ե . : . ր գողնոցները , այս կոփիչները , այս քարերը , այս գոր-
ծիքները , այս տախտակը , նոյն խոկ այս շրջափակ տեղը աշ-
խատութեան պատկերն են :

« Աստի ուշադիր եղիք , Եղբ . : . իմ . դաղընեաց վարա-
քը պիտի վերնայ . Որմ . : . թեան տաճարը պիտի լուսա-
ւորուի . եւ դուք նոր խորհրդանիշեր պիտի տեսնէք : (Ե . : . ր
կերպը կը նստեցնեն)

« Ե . : . ի Ե . : . ր ընդունուած ատեննիդ՝ ջանա-
ցինք ապացուցանել ձեզ , որ մինչեւ մէկ կէտ մը կատարե-
լութեան հասնելու համար աշխատութիւն եւ յարատեւու-
թիւն պէտք էր : Ս . : . րի փորձերնուդ մէջ ալ պիտի ջա-
նանք հասկըցընել ձեզ թէ ո՛րչափ ձեք աշխատութեամբ

յառաջ երթաք, այնչափ աւելի շահաւէտ դիւտեր պիտի ընէք, եւ այնչափ ալ աւելի մարդկային ծանօթութեանց հորիզոնը պիտի ընդարձակի ձեր առջեւ :

”Ս . օ . ըի Աստ . օ . ին փորձերուն խօսքն ըրի ձեզ : Արդարեւ պէտք է կրէք այն փորձերը, որք ձեր առաջին Աստիճանի փորձերէն նուազ ահարկու են, բայց ա՛նոնցմէ պակաս խորհրդաւոր եւ նշանակաւոր չեն : Օթ . օ . իս միջավայրը տախտակ մը կը տեսնէք որ զանազան նշանակներ կը պարունակէ, կազաչեմ որ ուշադրութեամբ զննէք : Այս տախտակին բոլորակը հինգ ուղեւորութիւն պիտի ընէք, ինչպէս որ Աշ . օ . ի Աստ . օ . ին մէջ երեք ուղեւորութիւն ըրիք :

”Այս ուղեւորութիւնները՝ այս փորձերը՝ պիտի սովորեցնեն ձեզ թէ ի՛նչպէս մարդ մը ամենէն նիւթական եւ նուաստ աշխատութիւններէ իմացականութեան ամենէն բարձր աշխատութեանց կանցնի : Ասոնք ձեզ առաւել եւս պիտի համոզեն թէ մեր պարտքն է՝ իրբւեւ Աղատ Արմադիր՝ աշխատութեան պաշտօնը ճանչել կատարել եւ տարածել :

”Մուղէ՛ք այս առաքելութեան դժուարութիւններուն մասնակից ըլլալ եւ անոր պահանջած պարտքերը կատարելու խօսք տալ ” :

Պ . Այո՛ :

Մեծ . օ . . « Աղբ . օ . Սարդ . օ . , առաջին ուղեւորութիւնը կատարել տուէք նուիրելոյն ” :

ԱՌԱՋԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Նուիրելոյն ձեռքը կոփիչ մը եւ մկրատ մը տալով՝ առաջին ուղեւորութիւնը կատարել կուտան Հարաւէն սկըսելով :

Մեծ . օ . . « Աշ . օ . , այս ուղեւորութիւնն ի՛նչ դաշտաբար արթնցուց ձեր մտքին մէջ ” :

Պ

Մեծ . . . « Եղբ . . . իմ, այս առաջին ուղեւորութիւնը Ս . . . բի մը աշխատութեան առաջին տարին կը նշանակէ . ձեր ձեռքը կօփիչ մը եւ մկրատ մը տուին , որովհետեւ նիւթականապէս այս գործիքները կը գործածուին՝ կոշտ քարը տաշելու , անոր խորտուբորտ կողմերը հարթելու եւ քաշուած գիծերուն համեմատ գործածութեան նպատակին յարմար ձեւն անոր տալու համար :

» Բարոյապէս կը նշանակէ թէ իր կերքերէն շրջապատ եալ մարդ մը կրնայ զանոնք վրայէն մերկանալ , ինչպէս որ քարն իր խորտուբորտ անհարթութիւնը կը մերկանայ , կը յղկուի , եւ այնպէս կրնայ Որմ . . . թեան կառուցած բարոյական շէնքին մէջ մտնելու արժանի ըլլալ :

« Եղբ . . . Մարդ . . . , երկրորդ ուղեւորութիւնը կա տարեւ տուէք նուիրելոյն » :

ԵՐԿՐՈՐԳ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Երկրորդ ուղեւորութեան միջոցին նուիրեալն իր ձախ ձեռքը կանոն մը եւ կարկին մը կը բռնէ .

Երբոր Եղբ . . . Մարդ . . . ուղեւորութեան լրացած ըլլալը ծանուցանէ ,

Մեծ . . . կրտ . . . « Եղբ . . . իմ, այս ուղեւորութիւնը , կամ լաւ եւս զրուցենք՝ Ս . . . բի մը աշխատութեան այս երկրորդ տարին՝ գործնական Որմ . . . թեան տարերքը կը սովրեցնէ իրեն , այսինքն կոկուած ու յղկուած նիւթերու վրայ կարելի եղած ճշգութեամբ գիծեր քաշել :

» Այս նոր կրթութեանց համար կանոնն ու կարկինն անհրաժեշտ գործիքներ են .

» Բարոյական մտք կը նշանակէ թէ պէտք է բնաբան մը ընէք առանց բարին չարէն որոշելու :

» Այդ կանոնը կը ցուցնէ թէ ձեր գործերը միշտ բարոյականի վսեմ սկզբանց վրայ պէտք է չափէք եւ ուղղէք :

« Կարկինը կը սովորեցնէ ձեզ թէ ձեր դործերը միշտ արդարութեան համեմատ պէտք է կանոնաւորէք :

« Այս երկու նշանները դարձեալ կը սովորեցնեն ձեզ որ ձեր կենաց ընթացքին մէջ, որուն օրինակն է այդ ուղեւորութիւնը, այսինքն մեր ուխտին մէջ ձեր մտած օրէն մինչեւ ձեր մահը՝ պէտք է միշտ առաջնորդ ունենաք ձեզ Որմ . . . կան Առն . . . յն երկու ջահերը . « Դմաստութիւն եւ Ղշմարտութիւն » : (Պահ մը լուսութիւն) .

« Եղբ . . . Մարզ . . . երրորդ ուղեւորութիւնը կատարել տուէք » :

ԵՐՐՈՐԳ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Սեծ . . . « Եղբ . . . իմ, այս երրորդ ուղեւորութիւնը կը նշանակէ Ս . . . ըի մը երրորդ տարւոյն Աշխ . . . ները : Կանոնը ձեռու ընկիւ պահեցիք, որովհետեւ անոր դործածութիւնը ենթադրել կուտայ թէ բաւական ծանօթութիւն ունիք այն տեղերը որոշելու, որոց համար շինուած անխիթերը սահմանուած են : (Լծակ մը կը արուի նուիրելոյն ձեռքը) :

« Այդ լծակը որ ձեր ձեռքը տուին, կը նշանակէ այն զօրութիւնը՝ որ տկարութեան յօգնութիւն կը հասնի : Այս դործիքին համար էր որ Արքիմիդէս կրէր . « Տուէք ինձի կրթներու տեղ մը, եւ աշխարհս վեր վերցնեմ » :

« Իսկ բարոյական մտօք կը նշանակէ այն ուժը՝ որ ամեն անմարդու բռնական եւ անիրաւ դործերու կընդդիմանայ » :

Եղբ . . . Մարզ . . . չորրորդ ուղեւորութիւնը կատարել տուէք :

ՉՈՐՈՐԳ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Աշ . . . տը կանոնը ձեռքը կը պահէ, եւ լծակին տեղ հարթաչափ մը կուտան իրեն :

Մեծ .°. « Եղբ .°. իմ, ձեր ձեռքը տրուած այդ երկու գործիքներն իսկական կարեւորութիւն մ'ունին :

» Կանոնը կը ծառայէ քարերուն ձեւը հասկընալու . հարթաչափն ալ անոնց մակերեւոյթն ուղղելու :

» Որմ .°. թիւնը, Եղբ .°. իմ, իր կատարելագործութեան ջանից մէջ յարատեւող է . իր իմաստուն նախատեսութեամբ ամեն միջոց խորհած է աշխարհիս վտանգները ցոյց տալու համար . բայց գիտութիւնը ոչինչ է՝ եթէ խրդճ մտանքն իրեն ընկեր չունենայ :

» Կրթեցէք ձեր Եղբ .°. ներն օգտակար դասերով . առաջնորդ եղիք անոնց առաքինութեան շաւղին մէջ . եւ ձեր բարի օրինակներովն անոնց խրատ եղիք :

» Ե, յս նոր պարտականութիւնները ձեզ ցուցնելու համար, այս անգամ կանոնին հետ՝ որ ուղղութեան նշանակ է եւ զոր արդէն ստացած էք՝ աւելցուցինք հարթաչափն ալ, որ ճշդութեան եւ գրեթէ անսխալութեան նշանակն է :

» Եղբ .°. Մարդ .°, հինգերորդ եւ վերջին ուղեւորութիւնը կատարել տուէք » :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

« Եւ իրեան այս վերջին ուղեւորութիւնն ազատ վիճակի մէջ կը կատարէ՝ առանց ձեռքը գործիքներ ունենալու . երբոր լինոց եւ Եղբ .°. Մարդ .°, ին միջոցաւ ծանուցուի :

Մեծ .°. կըսէ . « Ե, յս ուղեւորութիւնը Ս .°. բութեան հինգերորդ տարին կը նշանակէ : Ս .°. ըր՝ իր արհեստին գործածութեանը բաւական հմտացած ըլլալով, պէտք է որ այս տարին ալ տեսականը սովորելու գործածէ : Ետոր համար է որ այս ուղեւորութիւնն ազատ ձեռօք կատարել յիշէ :

» Ե, յսուհետեւ մտաւորական աշխատութեան պէտք է պարապիք :

« Ըյս ուղեւորութիւնը կը ծանուցանէ ձեզ նաեւ թէ այն ամեն կապերը՝ որ ձեզ կրնային նախապաշարմանց եւ մուրթութեանց կապել՝ խորտակուած են :

« Ա՛ երջապէս այս ուղեւորութեանց բովանդակութիւնը կը սովորեցնէ թէ Ս.՝. ըը պէտք է որ Տիեզ.՝. ց Ս.՝. Տար.՝. ին տաճար մը կառուցանէ, որուն թէ՛ նիւթը եւ թէ՛ արհեստաւորը ինքն է : Խորհրդաւոր դործիները՝ շինուածանիւթոց թերութիւններն անհետացնելու պէտք է ծառայած ըլլան, յետոյ անոնց աւելի կանոնաւոր ձեւեր եւ չափակցեալ կարգադրութիւն մը տալու, որպէս զի շէնքը կարելի եղածին չափ կատարելութեան մտենայ :

« Փառասիրական մրցումներէ հեռի կեցէք. պար կեշտ մարդու մը պէտք եղած առաքինութեանց մէջ ինք զինքնիդ կատարելագործեցէք. այսպէս կրնաք կատարել այն պաշտօնը՝ որ մեր մէջ ընդունեցիք, եւ այսպէս կըրնաք ապագային համար պատրաստել այն սրտի անդորութիւնը՝ որ անսողիւտ խղճմտանքէ մը կը ծագի :

« Եղբ.՝. Մարզ.՝. նուիրեալը տաճարին հինգ առաջին խորհրդաւոր աստիճաններէն վեր հանել տուէք, որպէս զի տեսնէ բոցափայլ աստղն ու անոր կեդրոնը զարդարող Գ դիրը » :

Երբոր Մ.՝. հինգերորդ աստիճանը հասնի, Մեծ.՝. կըսէ. « Եղբ.՝. իմ, նկատէ՛ այդ խորհրդաւոր աստղը. այդ աստղը կը նշանակէ հանճարը՝ որ մեծամեծ բաներու կը բարձրացնէ հողին, աւելի մեծ իրաւամբ կը նշանակէ նաեւ այն սուրբ կրակը, այն աստուածային լուսոյն մասը՝ որով Ս.՝. Տարա.՝. ն Տիեզ.՝. ց մեր հողիները ստեղծեց, եւ որուն ճառագայթներովը կրնանք որոշել ճանչնալ եւ գործադրել ճշմարտութիւնն ու արդարութիւնը : Արդրոնը տեսնուած Գ Վիրը Վազդիներէն Օննդոց (Ճէնէռասիօն) բառին սկզբնատառն է, որուն երկու սահմաններն են « Լստուած եւ Ըրարչութիւն » . հետեւաբար երեք մեծ բաներ ալ կը նշանակէ. « Լշխատութիւն, Վիտութիւն, Լմաստութիւն » :

“ Կուիրեալը սեղանին մօտեցուցէք Ս . օ . ըի քայլերով , բայց նախ Լ . 2 . օ . ի քայլեր առնել առէք , որպէս զի դայ եւ երդում ընէ ” :

“ Ոտք ելէք , եւ ՚ի կարգ , Եղբ . օ . ք իմ ” :

ԵՐԳՈՒՄՆ

“ Ես Լ

“ Կերդնում եւ կը խոստանամ ՚ի հաստատութիւն առաջին երգմանս՝ որ ինծի առանդուած դաղտնէքները հաւատարմութեամբ պահեմ , եւ զանոնք ոչ Լ . 2 . օ . ի մը հաղորդեմ , եւ ոչ ո եւ իցէ մէկու մը՝ ինչ կերպով ալ ըլլայ ” :

“ Եթէ երդմնազանցութիւն ընեմ , իմ առաջին ուխտադրութեանս մէջ սահմանուած պատիժները կրելու յանձնառու եմ ” :

Յետոյ Մեծ . օ . սուրը անոր ճակտին վրայ դնելով կրսէ .

“ Ի փառս Մ . օ . ի Ղ . օ . ին Տ . օ . ց , յԼ . օ . ն եւ ընդ Հով . օ . Մ . օ . ծի Լ . քեւ . օ . լից Պ . օ . զիոյ , եւ ինձ տրուած իշխանութեանց զօրութեամբ կընդունիմ եւ կը հաստատեմ զձեզ Ս . օ . ը Որմ . օ . ” :

Սուրին վրայ հինգ անգամ կոփելով կը զարնէ , եւ սեղանէն իջնելով եղբայրական համբոյրը կուտայ նուիրելոյն , եւ յետոյ կրսէ .

“ Լ . 10 Լ . ստ . օ . նիս մէջ ալ առաջինին պէս խօսքեր , նշաններ , շօշափում եւ բաղխում ունինք ” :

ԿԱՐԳ

“ Լ . 2 ձեռքը սրտին վրայ դնել՝ մատերը տարածելով , եւ բութ մասն ուղղաչափի պէս վեր վերցընել ,

ՆՇԱՆ

“ Ի կարգի ըլլալով , ձեռքը հորիզոնական դիրքով ետ քաշել եւ ուղղահայեաց կերպով վար ձգել ” :

ՇՕՇԱՓՈՒՄ

« Երեք հարուած ցուցամասին եւ երկուք ալ միջմասին վրայ » :

ԲԱՂԽՈՒՄ

« Բաղխումը հինգ հարուած է , առաջին երկուքը աբադ , եւ վերջի երեքը ծանր , իրարմէ հաւասար ընդհատութեամբ » :

ՆՈՒՒՐԱԿԱՆ ԽՕՍԲ

« Ս . . . որ Ա . . . ի նուիրական խօսքին պէս կը հեզի » :

Մեծ . . . « Եղբ . . . իմ , գացեք առաջին եւ երկրորդ Պ . . . բուն ինքզինքնիդ ճանչցուցէք » :

Այս ըլլալէն ետեւ , Մեծ . . . կրսէ . « Եղբ . . . ք Ա . եւ Բ . Պ . . . ք , ձեր սիւներուն առջեւ շարուած Եղբայրներն հրաւիրեցէք որ Ա . . . Եղբ . . . ն այսուհետեւ Ս . . . բ ճանչնան այս Յ . . . Օթ . . . իս , սիրեն զինքն այն ամեն բարեկամութեամբ՝ զոր պարտական ենք ցուցնել մեր Եղբ . . . ց , եւ երբակի բաղխումս անոր բարձրացումը ծափահարեն .

Աստ . . . ին համեմատ կը ծափահարեն : Սուրբ . . . կը կը պատասխանէ : Մեծ . . . ծափահարութիւնը փոխարինել կուտայ եւ կրսէ :

ՀՐԱՀԱՆԳ

1. Պու Ս . . . բ սա :

2. Այս :

3. Ինչո՞ւ համար Ս . . . բ ըլլալ ու զեցիր :

4. Ե գիրը ճանչնալու համար :

5. Ի՞նչ կը յիշեցնէ այդ գիրը :

6. Ար յիշեցնէ « Աստուած , Օճնունդ , Երկրաշափութիւն » , որոց Պաղղիներէն փակագիրն է :

7. Ի՞նչպէս այդ դադափարները կը յիշեցնէ :

- Պ. Սան զի հին ժամանակը «Անու» բառը կը նշանակէր «Արարիչ եւ Արարած» եւ Արարչապիութիւնը գիտութեանց գիտութիւնն է՝ որուն միջոցաւ նիւթին տարածութիւնը կրնանք հասկնալ, ինչպէս նաեւ անոր ապացուցութեանց միջոցաւ մտքերնիս մինչեւ առ Աստուած կրնանք բարձրացնել :
- 1. Ի՞նչպէս Ս . . . ր ընդունուեցար :
- Պ. Պ . . . սիւնէն Ժ . . . սիւնը անցնելով, եւ տաճարին եօթն աստիճաններէն վեր ելնելով :
- 1. Ա՞ր դռնէն անցնելով այդ աստիճաններէն վեր ելար :
- 1. Արեւմտից դռնէն :
- 1. Այնքա մտնելուդ արդեւք եղա՞ն :
- Պ. Այո՛, Այդ . . . Պռն . . . նշան մը շօշափուով մը եւ խօսք մը պահանջեց :
- 1. Տաճարը մտած ժամանակդ ի՞նչ տեսար :
- 1. Արեւ մեծ սիւներ :
- 1. Ի՞նչ նիւթէ էին սիւները :
- 1. Պղնձէ :
- 1. Ի՞նչ էր բարձրութիւննին :
- 1. Տասնեւութ կանգուն :
- 1. Արջապատը :
- 1. Չորս կանգուն :
- 1. Թանձրութիւնը :
- 1. Չորս մատնաչափ :
- 1. Արեմն սնամէջ էին :
- 1. Այո՛, Սեծ . . . :
- 1. Ինչո՞ւ համար :
- 1. Պործիւքները եւ Ա . . . ց ու Ս . . . րաց վճարուելիք թոշակներուն դանձն անոնց մէջ պահելու համար :
- 1. Ս . . . րք իրենց թոշակն ի՞նչպէս կրնդունին :
- 1. Նշանաւ մը խօսքով մը եւ շօշափմամբ :
- 1. Ս . . . րաց նշանները խօսքերն ու շօշափմունքը նոյն եւ նմա՞ն են Ա . . . ց . . . ց :

- Պ. Ոչ, Մեծ . . . , բողբոջին տարբեր են :
- Գ. Ս . . . բի նշանն ըրէ :
- Պ. (Սընէ) :
- Գ. Ի՞նչ է անցախօսքը :
- Պ. Ե՛իպ . . .
- Գ. Նուիրական բառը կամ խօսքը տուր ինձ :
- Պ. Տուէք ինձ առաջին գիրը , ես ալ երկրորդը տամ ձեզ :
- Գ. Եօշափոււմը Եղբ . . . Մարդ . . . ին հաղորդէ :
- (Սուտայ) :
- Եղբ . . . Մարդ . . . կրտէ . « Ղիշ է մեծ . . . » :
- Գ. Չեր Օթ . . . ին մէջ զարդեր ունի՞ք :
- Գ. Եյո՛ , Մեծ . . . :
- Գ. Քանի՞ հատ :
- Գ. Երեք հատ :
- Գ. Արո՞նք են :
- Պ. Միւսիծնեայ սալայատակը , Բոցափայլ աստղը , եւ
Մսղնենկար վերջաւորը :
- Գ. Ի՞նչ բանի կը գործածուին :
- Պ. Միւսիծնեայ սալայատակը մեծ դրան սեամը կը զար-
դարէ . Բոցափայլ աստղը մէջ տեղը կը շողշողայ
Օթ . . . ը լուսաւորելու համար , եւ Մսղնենկար վեր-
ջաւորն ալ եզերքները կը պատէ ու կը զարդարէ :
- Գ. Եյդ երեք զարդերուն բարոյական մեկնութիւնը
տուր ինձ :
- Պ. Միւսիծնեայ սալայատակը Արմնադրաց մէջ տիրող
սերտ միութեան օրինակն է . Բոցափայլ աստղը
Արմ . . . թեան աշխարհիս վրայ ծաւալելիք լոյսը կը
ներկայացնէ . եւ Մսղնենկար վերջաւորն ալ աշխարհիս
ամեն կողմը գտնուած Արմնադիրներն իրարու միա-
ցընող շղթայն կը նշանակէ :
- Գ. Չեր Օթ . . . կին մէջ դո՛հարեղէններ ունի՞ք :
- Գ. Եյո՛ , Մեծ . . . :
- Գ. Քանի՞ հատ :

- Պ. Սեյ հատ, այսինքն՝ երեք շարժուն եւ երեք անշարժ :
- Ը. Շարժուն գոհարեղէնները որո՞նք են :
- Պ. Ազղաչափը, հարթաչափը, կապարաւոր թեղը :
- Ը. Այդ գոհարներն ի՞նչ գործածութիւն ունին :
- Պ. Ազղաչափը նիւթոց անկիւններն ուզղելու կը ծառայէ, հարթաչափը շէնքին քարերը հորիզոնական գիրքով դնելու, կապարաւոր թեղն ալ շէնքերն իրենց հիման վրայ շիտակ վեր բարձրացնելու :
- Ը. Այդ նշանակներուն բարոյական իմաստն ի՞նչ է :
- Պ. Ազղաչափը կը նշանակէ թէ մեր ամէն գործերը պէտք է արդարութեան վրայ կանոնաւորեալ ըլլան . հարթաչափը կը նշանակէ թէ Որով՞ . օց մէջ ամենակատարեալ հաւասարութիւն կը տիրէ . կապարաւոր թեղն ալ կը նշանակէ թէ ամեն կատարելութիւն վերէն կուգայ :
- Ը. Անշարժ գոհարեղէնները որո՞նք են :
- Ը. Անտաշ քարը, խորանարդ քարը, գծելու տախտակը :
 Ի՞նչ բանի կը գործածուին :
- Պ. Անտաշ քարն է այն նիւթը՝ որուն վրայ Ա. շ. օ. ք կը վարժուին . խորանարդ քարը Ս. օ. րաց գործիները սրելու կը ծառայէ . գծելու տախտակն ալ վարպետներուն յատակագիծը շինելու կը ծառայէ :
- Ը. Բարոյապէս ի՞նչ կը նշանակեն :
- Պ. Անտաշ քարը մարդու մը Որով՞ . քնդուռուելէն առաջ ունեցած վիճակին պատկերն է . խորանարդ քարը մոլութեանց տպաւորութիւնը ջնջելու համար մեր տարած խնամոց խորհրդանիշն է . իսկ գծելու տախտակը օրինակ է այն բարի օրինակներուն՝ զորս վարպետ մը պարտական է տալ ստորին Ա. տ. օ. րու Նոր. օ. ց :
- Ը. Ս. օ. Ի աստիճանին մէջ քանի՞ նշաններ կան :

- Գ. Հինգ. այսինքն . « Չայնային , Աոկորդային , Լան-
չային , Չեռնային , եւ Ռոնային » :
- Դ. Ի՞նչ բանի կը ծառայեն :
- Գ. Չայնայինը Ա՛յ . Ի եւ Ս . Բի խօսքերը տա-
լու . Աոկորդայինը Ա՛յ . Ի նշանը տալու՝ երբոր ուղ-
ուի . Լանչայինը Ս . Բի նշանն ընելու . Չեռնայինը
Թէ՛ մէկ եւ Թէ՛ միւս աստիճանին շօշափմունքը տա-
լու . Ռոնայինը երկուքին ալ քալուածքը կատարելու :
- Դ. Ս . Բք Օթ . Կին մէջ ո՞ր կը կենան :
- Գ. Հարաւի եւ Հիւսիսի կողմը :
- Դ. Ինչո՞ւ համար Հարաւի կողմը :
- Գ. Վարպետներուն օգնելու եւ անոնց քով կրթուելու
համար :
- Դ. Հիւսիսի կողմը ինչո՞ւ կը կենան :
- Գ. Ա՛յ . Բը կրթելու համար :
- Դ. Ս . Բ մը ի՞նչպէս կաշխատի իր վարպետին հետ :
- Գ. Ուրախութեամբ եռանդով եւ ազատութեամբ :
- Դ. Ո՞րչափ ժամանակ անոր կօզնէ :
- Գ. Մինչեւ որ ինքն ալ վարպետութեան տարիքը հասնի :
- Դ. Թոշակդ ստացա՞ր :
- Գ. Գոհ եմ :
- Դ. Ո՞ր ստացար :
- Գ. Ժ . Բ . սիւնին առջեւ :
- Դ. Այդ դիրքն ի՞նչ կը նշանակէ :
- Գ. Իբար ճանչելու ծառայող բառին սկզբնատառն է .
միանգամայն կը նշանակէ այն սիւնը՝ որուն բողբոխ-
քըն եւ առջեւը կը կենան Վարպ . Բ եւ Ս . Բք .

ՓԱԿՈՒՄՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

Տ. Եղբ . : . Ը. Դ . : . , քանի՞ տարեկան ես :

Պ. Հինգ տարեկան, Մեծ . : . :

Տ. Ա. : . ըխաշխատութիւնները ժամը քանի՞ն կաւարտին :

Պ. Կէս գիշերին :

Տ. Ժամը քանի՞ն է , Եղբ . : . : Դ . : . :

Պ. Կէս գիշեր է , Մեծ . : . :

Մեծ . : . « Որովհետեւ կէս գիշեր է , եւ Ա . : . քայս ժամուս իրենց աշխատութիւնները կը վերջացնեն , Ը . եւ Դ . Դ . : . Եղբ . : . ք , ձեր սիւներուն առջեւ շարուած Եղբ . : . ներն հրաւիրեցէք որ ձեզի եւ ինձի հետ միանալով . Կ . : . Երեւ . : . լից Յ . : . Ա . : . Օթ . : . կիս Ա . : . ըխաշխատութիւնները գոցենք սովորական նշաններով եւ բախմամբ » :

Դ . : . ք ծանուցումը կը կրկնեն :

Մեծ . : . կօփիչովը հինգ հարուած կուտայ , զոր Դ . : . ք կը կրկնեն եւ կըսէ :


« Ի Փ . : . Մ . : . Ի Ն . : . Ին Տ . : . լաց , յԱ՞ն . : . եւ ընդ Հով . : . Մ . : . Ի Երեւ . : . լից Դ . : . ց , Կ . : . Երեւ . : . լից Յ . : . Ա . : . Օթ . : . կիս Ա . : . ըխաշխատութիւնները կը գոցուին :

« Ըս իս , Եղբ . : . ք իմ , նշանաւ բախմամբ եւ ձայնարկութեամբ » :

Յետոյ Մեծ . : . կըսէ .

« Եղբ . : . ք իմ , աշխատութիւնք գոցուեցան , եւ հիմա նորէն Ը . : . Ի Ըստ . : . նին պիտի անցնինք :

Ը . : . Ի Օթ . : . ք նորէն կը բացուի , եւ սովորական կերպով կը գոցուի :



ՍԿՈՎՏԵԱՆ ԾԷՍ

Արարողութիւնն ու հրահանգը գաղղիական ծիսին պէս են՝ բաց ՚ի հետեւեալ տարբերութիւններէն :


Ե. Գ.։ Եղբ.։ ը Հիւսիսային սիւնակին առջեւ ,
եւ Բ. Գ.։ Եղբ.։ ը Հարաւայինին առջեւ կը նստին ,
Բախումը հինգ հաւասար հարուած է :

Չայնարկութիւնը Հուզէ է՝ փոխանակ (Ա իվա) ի .
Նուիրական բառն է Ժ.։ փոխանակ Պ.։ ի :



UNIVERSITY OF

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



Տ Ե Տ Ր

ՎԱՐՊԵՏԻ ԱՍՏԻՃԱՆԻՆ

Ախտին պայմանները կատարող ո եւ է Ս. ը մը՝ որ
 Յրդ Աստիճան ընդունելու փախարի, պէտք է որ Եղբ. ը.
 Ա. Գ. ը. ին առանձնակի յայտնէ՝ յարմար ժամանակ,
 Աշխ. ը. ք սկսելէն ետեւ Եղբ. ը. Ա. Գ. ը. կըսէ.


« Մեծ ը. Յ. Օթ ը. կիս Ս. ը. ըներէն Եղբ. ը. Ա. ը. . .

Վարպ. ը. ի Աստիճան ընդունելու շնորհը կը խնդրէ » :

Մեծ ը. կըսէ. « Գ. ը. Եղբ. ը. ք, ձեր սխնեբուն
 ծանուցէք որ Եղբ. ը. Ա. ը. . . Ս. ը. ը Վարպ. ը. ի Աս-
 տիճանին կառաջարկուի. հարցուցէք Եղբ. ը. ց թէ դիտու-
 զութիւն մ'ունի'ն » :

Գ. ը. Եղբ. ը. ք ծանուցումը կը հաղորդեն. եթէ դի-
 տողութիւն մը ըլլայ՝ վիճաբանութեան կը դրուի, եւ Օթ ը.
 կը՝ Եղբ. ը. Ա. ը. խօսին եզրակացութեան վրայ որոշում
 կուտայ, եւ եթէ Եղբ. ը. ներէն ոմանք պահանջեն՝ քուէ-
 արկութիւն կընէ. Եթէ քուէն նպաստաւոր ըլլայ, Մեծ ը.
 Աստիճանին ծափահարութիւնը կատարել կուտայ, եւ ըն-
 դունելութեան օրը կորոշուի, Եղբ. ը. Քարա ը. նոյն օր-
 ուան աշխատութեանց ուրուագծին մէջ կը յիշատակէ :

Որոշեալ օրին համար ամեն Վարպ. ը. ք պէտք է հը-
 րաւիրուին. գումարման Տախտ ը. կը պէտք է որ Յրդ Աս-
 տիճանի ընդունելութիւնը ծանուցանէ, եւ զգեստուց ձե-
 ւը յիշեցնէ : Ամեն Վարպետները ներս կընդունուին եւ
 առաջարկեալ Ս. ը. ըին խնաց կը արուի որ Օթ ը. կը գայ :



ՆԸԽԵՆԳԻՏՆԵԼԻՒԻՒԹ

Մեծ .: աշխատութիւններն Աշխ .: ի Աստ .: աւ կը բանայ . վերջին նստին Աշխ .: ց ընթերցումն ընել կուտայ . յետոյ Աշխ .: ըը Ս .: ըի Աստ .: նաւ կը բանայ եւ կը հրամայէ Պ .: ըուն՝ որ ներկայ գանուող բոլոր Աղբ .: ց Սարպ .: ըլլան ստուգելու համար իրենց Սիւն .: ըը պտըտին , եւ իւրաքայիւրին զատ զատ եւ ցած ձայնով հարցընեն խօսքերը նշաններն եւ Աշ .: ըը : Այս օրինական ձեւը հարկաւոր է թէ՛ զեղծմանց առաջին առնելու եւ թէ՛ խօսքերը Աղբ .: ց միտքը պահել տալու համար որպէս զի չմոռնան :

Եթէ Աղբ .: ըէն ոմանք լաւ կըթուած չըլլան , Պ .: ը իմաց կուտան Մեծ .: ին , եւ եթէ Օթ .: ին անդամ են , Մեծ .: կը պատուիրէ անոնց որ կըթուին եւ անոնց մոռցած խօսքերը կը հաղորդէ իրենց : Իսկ եթէ այցելու Աղբ .: ը են , պէտք է որ անպատճառ հրատարին Տաճարէն :

Երբոր ստուգուի թէ բոլոր Աղբ .: ը Սարպ .: ը են , Մեծ .: Սարպ .: ըի Աստ .: ին Աշխ .: ըը կը բանայ : Նոյն վայրկենէն՝ բոլոր Աղբ .: ը Մեծ .: յի պատուանունը կառնուն , եւ Մեծ .: ալ Վերջարգոյի :

ՉԱՆՐԻ ՕԹԻՆԵԿԻՆ

Օթ .: ը զուգահեռագիծ ուղղանկիւն մը կը ներկայացնէ երկու մասի բաժնուած. մէկը կը կոչուի Հիգալ, այսինքն Սուրբ, միւսը Գաբիլ կամ Սուրբ Սրբոյ:

Երբոր ընդունելութիւն ըլլայ, Հիգալն եւ Գաբիլն իրարմէ կը դատուին սեւ վարագոյրով մը՝ որուն վրայ տեղ տեղ տխրական զարդեր նկարուած են. Գեր .: յին աթուռը վարագոյրին առջեւ կը դրուի՝ մինչեւ որ (վարագոյրը) վերնայ:

Հիգալը սեւ օթոյներով կը զարդարուի եւ միայն ազօտ կանդեղով մ'ու երեք դեղին մեղրամոմով կը լուսաւորուի: Երեք մեղրամոմերը երեք լոյսերուն առջեւ կը դրուին:

Հիգալին մէջ տեղը քօղով ծածկուած դագաղ մը կը դրուի:

Գահակալը Գերայրգոյ կը կոչուի, Գէտերը Մեծարգոյ եւ ուրիշ ամեն Եղբարք Մեծարոյ:

Սարպետներուն յատկական նշանն է կապոյտ ժապաւէն մը աջ ուսէն ձախ թեւին տակը անցած. ժապաւէնն իր գոյնովը կը յիշեցնէ թէ զայն կրողը կապոյտ Որմնագրութեան, այսինքն խորհրդաւոր Որմ .: թեան մէջ վարպետ է:

Եոյն ժապաւէնին վարի ծայրը վարդածեւ կարմիր կապով մը դոհարը կախուած է, որ է անկիւնաչափ մը՝ որուն վրայ քառասունուհինգ աստիճան բացուած կարկին մը խաչածեւ կը հանդչի:

ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

Գեր. : Կոփելի հարուած մը կը զարնէ եւ կըսէ .
Հարց. « Մեծարդոյ Եղբ. : Ե. Գ. : , ի՞նչ է Գ. : Ի
մը առաջին պարտքը Սարգ. : Ի Օթ. : կին մէջ » :

Պատասխան. « Գեր. : , ստուգել թէ Տաճարը փակ-
ուած է » :

Հ. : Հաճեցէք ստուգել Եղբ. : Իմ :

Հրամանը կատարուելէն վերջը Գեր. : կըսէ .

Մեծ. : Դոյ Եղբ. : Ի. Գ. : , ո՞րն է Գ. : Ի մը
երկրորդ պարտաւորութիւնը :

Պ. Ստուգել թէ ամեն ներկայ գտնուող Եղբ. : ք
Սարգե՛տ են :

Հ. Մեծ. : Դոյ Եղբ. : ք Ե. եւ Ի. Գ. : ք , հա-
ճեցէք ստուգել :

Եղբ. : Գ. : ք այս հրամանը կը կատարեն իւրա-
քանչիւրն իւր սիւնը պտղաւելով , եւ երբոր իրենց տեղը
դառնան , կարգաւ կրսեն .

Պ. Գեր. : Սարգե՛տ , իմ սեանս առջեւ շարուած
ամեն Եղբ. : ք Սարգե՛տ են :

Հ. Եղբ. : Ե. Գ. : , ի՞նչպէս կրնամ փտահ ըլլալ
թէ դուք Սարգ. : ք :

Պ. Գեր. : , կրնաք զիս փորձել , Եկասիան ծանօթ
է ինձ :

Հ. Մեծ. : Դոյ Եղբ. : Ի. Գ. : , քանի՞ տարե-
կան էք :

Պ. Եօթն եւ աւելի , Գեր. : :

Հ. Որմնադիրք ո՞ր ժամուն Սարգե՛տի աշխատու-
թիւնները կըսկսին :

Պ. Սէս օրին , Գեր. : :

Ն . Ճամբ քանի՛ն է , Սեծ . : . դոյ Ա արպ . : . Գ . : .
Պ . Աէս օր է , Գեք . : .

Գեք . : . կրսէ . « Որովհետեւ կէս օր է , եւ այս ժա-
մուս մեր աշխատութիւնները կըսկսին , Աղբ . : . ք Ա . եւ
Ի . Գ . : . ք , ձեր սիւներուն առջեւ շարուած Աղբ . : . ները
հրաւիրեցէք որ ձեզի եւ ինձի հետ միանալով Ա արպեա-
ներու սենեակին աշխատութիւններն սկսինք » :

Աղբ . : . Գ . : . ք հրաւերը կը կրկնեն :

Գեք . : . կոփելով երեք հարուած կուտայ զոր Գ . : . ք
կը կրկնեն . յետոյ կրսէ .

« Ի Փ . : . Ս . : . Ճարտ . : . ին Տիեզ . : . ց , յԱ . : . ն եւ
ընդ Հով . : . Մ . : . ի Արեւ . : . լից Գաղղիոյ , Օթ . : .
կիս Ա արպետի աշխատութիւնները կը բանամ նոյն աս-
տիճանին նշաններովն եւ բախմամբ » :

« Աւ իս , Աղբ . : . ք իմ , նշանաւ եւ բախմամբ (զոր
կը կատարեն) » :

Գեք . : . կոփելով հարուած մը կուտայ եւ կրսէ .

« Սիջին սենեակին աշխատութիւններն սկսան . տե-
ղերնիդ նստէք , Սեծ . : . Աղբ . : . ք » :

Աղբ . : . Քարտ . : . խօսք ընդունելով վերջին աշխա-
տութեանց ծրագիրը կը կարգայ : Ընթերցումն ըլլալէ եւ
հաստատուելէ ետեւ , կանցնին Ա արպետի աշխատութեանց
որը սովորաբար ընդունելութիւն մ'են .

ԸՆԳՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

Ս . : . ըի մը Ա արպետութեան աստիճանին ընդունուիլը
նախորդ նստի մը մէջ քուէարկութեամբ որոշուած ըլլալով ,
այն որոշումը նորէն հաստատուելէ ետեւ , Աղբ . : . Սարգ . : .
կերթայ նուիրեալը կը բերէ , եւ երբոր երկուքն ալ Տաճա-
րին դրան քով հասնին , նուիրեալը երկրորդ Աստիճանի
բախմամբ դուռը կը զարնէ :

Աղբ . : . Դուն . : . հը Աղբ . : . Ի . Գ . : . ին խնայ կու-

տայ . ան ալ Ա . Ռ . Գ . ։ ին՝ որ Վեր ։ ին կը հաղորդէ ։
Վեր ։ կըսէ . « Մեծ ։ գոյ Աղբ ։ Ա . Ռ . Գ . ։ , նայե-
ցէք ո՞ր գործաւորն է որ այդպէս Սատարի կերպով Այր-
պետներուն գուռը կը զարնէ ։

Այս հրամանը յաջորդաբար երկու Ռ . ։ էն կը կնուե-
լէ ետեւ , Աղբ ։ Ռան ։ հին կը հաղորդուի , որ գուռը
կէս մը բանալով կըսէ . « Ո՞վ է այդպէս զարնողը ։

Աղբ ։ Մարդ ։ կը պատասխանէ .

« Աղբ ։ Ա . . . Ս . ։ ըն է , զոր քուէարկութեամբ
արժանի դատեցիք Յրդ խորհրդաւոր աստիճանն անցնելու ,
եւ կը խնդրէ որ փորձերը կրէ » ։

Այս պատասխանէն ետեւ , որ Աղբ ։ Ռան ։ հէն
Բ . Ռ . ։ ին , անկէց ալ Ա . Ռ . ։ ին պէտք է անցնի ,
Վեր ։ կըսէ .

« Աղբ ։ Արար ։ , գացէք Աղբ ։ Մարդ ։ ին քով ,
եւ երկուքնիդ ՚ի միասին Ս . ։ ըը ներս բերէք սովորական
եղանակաւ ։

Հրամանը կը կատարուի . գոները կը բացուին , նուիր-
եալը Տաճարին մէջ կը մուծուի ետ ետ քայլերով , եւ եր-
կու սիւներուն մէջ տեղը կը բերուի , կրնակը Արեւ ։ Ք
գարձած ։ Աղբ ։ Մարդ ։ եւ Աղբ ։ Արար ։ միշտ
անոր քովը կը կենան եւ կօղնեն ։

Արբալայըը նորէն կը գոցուի , եւ Վեր ։ կըսէ .

« Սատար , խօսք կուտա՞ք որ մինչեւ անգամ եթէ
խնդրած աստիճանիդ չկրնաք ստանալ , հոս տեսածնիդ
կամ լսածնիդ ամենեւին չի յայտնէք » ։

« Կուիրեալը պէտք է պատասխանէ .

« Եր խոտանամ » ։

Ն . Այրպէս ըլլալ ուղեկնուդ նպատակն ի՞նչ է .
արդեօք կըթուելու եւ ինքզինքնիդ հնար եղածին չափ կա-
տարեղադործելու փախա՞քը միայն ներշնչեց ձեր այդ գե-
տաւորութիւնը ։

Պ . Ա . յ . ։

Ը. Չեր պատուոյն եւ Որինադրական հաւատարմութեան վրայ կրնա՞ք հաստատել թէ ճշմարտութիւնը խօսեցաք, բովանդակ ճշմարտութիւնը, միմիայն ճշմարտութիւնը :

Պ. Այո՛ :

Ը. Չեր ըսածները զօրացնելու եւ Որինադրութեան սրբազան կնիքն անոնց տալու համար, պատրաստ էք Ուր՞ : Կան նշանաւ ալ զանոնք հաստատելու :

Պ. Այո՛ :

Վեր : : . « Եղբ : : Մարդ : : , Սատարը դարձուցէք , որպէս զի ըրած խոստումը իւր աստիճանին նշանովը հաստատէ » :

« Եռիրեալը կը դառնայ եւ Սատարի նշանը կուտայ :

Վեր : : . « Եղբ : : Մարդիչ , եւ դու Եղբ : : Արարողապետ , նուիրեալը Սատարի քայլերով իրեն համար պատրաստուած տեղը տարէք » :

Վազազին դիմացը զինքը կը նստեցնեն :

Վեր : : . « Եղբ : : . . . , կը տեսնէք որ մեր Չործ : : նին մէջ տեղը դամբան մը բարձրացած է . տաճարիս դաւիթները սգաթոյր օթոցներով ծածկուած են . մեր երեսները սրտերնուս տխրութիւնը կարտայայտեն : Փոխանակ աշխատութեան յառաջ բերած այն արդիւնաւոր դործունէութեան՝ զոր Արարչաներուն Տաճարին մէջ տեսնելու կ'սպասէիք , խոր թախծութեան զգալի նշաններ կը տեսնէք . ձեռքերնիս թողուցեր են վրձինն ու գծագրութեան տախտակը , եւ վհատութեան մերձաւոր անշարժութեան մը մէջ ընկղմած ենք . ինչո՞ւ համար : Իմ առաջին պարաքս է պատճառը ձեզ յայտնել :

« Մեզ հոս դումարող այս դամբանական հանդէսը յիշատակ է այն եղբերական անցքին՝ որ իր մէջ պարունակած խորհրդաւոր գաղափարներուն պատճառաւ մեր ուխտէն ընդունուած աւանդութեան մը համեմատ ժամանակաւ ախտիս հետեւողներուն մէջ պատահած է :

« Մի՛ մոռնաք յիշել որ Որմ՛ .: թիւնը միշտ այլաբանական նշանակներով կը գործէ . ուրեմն ուշագիւր եղիք որ ձեզ ներկայացած խորհրդանիշերուն խմաստը լաւ ըմբռնէք . յետոյ անոնց մեկնութիւնն ալ կ'ստանաք :

« Որմ՛ .: կան աւանդութեան համեմատ , Քիրամ՛ , Տիրոսի թագաւորը , Քիրամ՛—Միլի անուն հռչակաւոր ճարտարագետը Սողոմոն թագաւորին զրկեց որպէս զի Երուսաղէմայ Տաճարին շինութեան վերաանշութիւն ընէ :

« Քիրամ՛—Միլի բազմաթիւ գործաւորներ ունենալով իր հրամանին ներքեւ , զանոնք երեք կարգի բաժնեց . Մշակերտ , Սատար եւ Սարպետ :

« Իւրաքանչիւր կարգ իր սեփհական խորհուրդներն ունէր , եւ ամեն մէկ կարգի անդամակիցք իրար ճանչելու համար յատուկ խօսքեր նշաններ եւ շոշափումներ սահմաներ էին մէջերնին :

« Մշակերտք իրենց թոշակը Ժ .: Սիւնին առջեւ կընդունէին , Սատարք Գ .: Սիւնին առջեւ , իսկ Սարպետք մէջ տեղի սենեկին մէջ . բայց վճարողները մէկու մը թոշակ չէին տար՝ մինչեւ որ ամենայն զգուշաւորութեամբ զիւրաքանչիւրն իր աստիճանին մէջ « չի փորձէին » :

« Երեք չար ընկերներ , տեսնելով որ Տաճարին շինութիւնն աւարտելու վրայ էր , եւ իրենք դեռ Սարպետութեան Մատիճանին չէին հասեր , խորհուրդ ըրին որ նենգութեամբ Յարգոյ Քիրամ Սարպ .: ին վրայ իյնան . եւ սպառնալէօք կամ բռնութեամբ Սարպետի խօսքերը նշաններն ու շոշափումն անկէ կորզեն :

« Մյս երեք վառշուէրները գիտէին որ Քիրամ ամեն իրիկուն գործաւորներն արձկելէն ետեւ կերթաք շինութիւններն աչքէ կանցունէր . ուստի որոշեցին որ նոյն միջոցին իւրաքանչիւրը Տաճարին երեք դրանց մէկուն քով դարանի մտնեն :

« Սարպետն իր այցելութիւնը կատարելէ ետեւ երբ որ արաւային դռնէն դուրս կեցնէր , երեք ընկերներէն մէկը

գիմացն ելաւ ձեռքը կանոնով մը, եւ զինքը կեցընելով Սարպետի խօսքն ու նշանն ուզեց : « Թշուառակա՛ն, ըսաւ անոր Քիրամ, դուն աղէկ գիտես որ իմ պարտականութիւնս թող չտար ինձ որ զանոնք քեզ տամ, եւ ես ալ պարտքս կատարելու համար կենացս վտանդն անդամ բանի տեղ չեմ դներ. ուստի այդ կերպով Սարպետի խօսքն ու նշանը չեմ կրնար սալ քեզ. ջանք ըրէ որ արժանի ըլլաս, եւ այն ժամանակ կրնդունիս . . . » :

« Իսկոյն դաւաճանն իր ձեռքի կանոնով ուժդին հարուած մ'ուզեց իջեցընել Քիրամին դիտուն, բայց հարուածն աղէկ ուզուած չըլլալուն՝ անոր ուսին եկաւ :

« Քիրամ փախչելով ազատիչ ուզեց, եւ դէպ Մըրեմբտեան դուռը դնաց. հոն երկրորդ Սատարը գիմացն ելաւ, որ ձեռքը լծակով մը զինեալ առաջինին ըրած խընդիրը կրկնեց : Քիրամ ասոր ալ նոյն պատասխանը տալով, Սատարը ձեռքի լծակն անոր դիտուն իջեցնել ուզեց, բայց Քիրամ փախչելով հարուածը ծոծրակին եկաւ :

Քիրամ իր մնացած ուժն ամփոփելով Մըրեմբտեան դռնէն փախչիլ ուզեց, բայց հոն ալ երրորդ Սատարը դէմն ելնելով նոյն խնդիրն ըրաւ. Սարպետն ասոր ալ մերժողական պատասխան տուաւ : Այն ատեն դաւաճանը ձեռքի կոփիչովն այնպիսի բուռն հարուած մ'իջեցուց Քիրամի ճակատին, որ զայն մեռած իր ոտքին ներքեւ տարածեց :

« Արեք դաւաճաններն իրենց դորձած ոճրին մեծութիւնն ու անպիտանութիւնը շուտով հասկցան : Ուստի առաջին մտածութիւննին եղաւ իրենց եղբւնադործութեան հետքը ջնջել՝ Քիրամի մարմինը քաղքէն դուրս տանելով, եւ գոյին դաշտին մէջ թաղեցին :

« Այս սոսկալի դէպքը շատ չի քշեց՝ Յ. : Ա. : Քիրամի վերատեսչութեան ներքեւ աշխատող բազմաթիւ դործաւորներն իմացան :

« Սարպետներն անմիջապէս ժողովի դումարուելով՝ իրենց Վործ. : նը սեւով պատեցին ի նշան սղոյ, եւ բա-

ւակն ժամանակ Քիրամի վրայ լայէ ետեւ , որոշեցին որ
ամեն ջանք 'ի դորձ դնեն , ոչ միայն իրենց տարաբաղդ
գլխաւորին մարմինը գանելու եւ անոր պատշաճ թաղում
մը տալու համար , այլ եւ այն խորհրդաւոր գոհարը գրա-
նելու , զոր Քիրամ միշտ իր վրայ կը կրէր եւ որուն վրայ
անեղծանելի տառերով **Տ . : . ց Մ . : . ծ Ճ . : .** պետին ան-
ուան սկզբնատառն . եւ **Վ** արպետներուն խորհրդաւոր ան-
դանակոչութիւնը գրոշմուած էր :

« Խուզարկու թիւնը կատարեալ յաջողութեամբ պսակ-
ուեցաւ :

« Սատար , այս Տաճարը մտած ժամանակնիդ մէջերնիս
որոշած էինք , որ այս պատմուած ցաւալի անցքին մէջ
առաջին **Վ** արպետներուն ըրածին նմանելու համար՝ մեք
ալ անոնց պէս խուզարկութիւն ձեւացնենք : Վուզէ՛ք դուք
ալ այս յիշատակի արարողութեան մէջ մեզի հետ միանալ » :

Եւ իրեանն « **Եյո՛** » պէտք է պատասխանէ :

Վեր . : . « **Եղբ . : . Ի . Վ . : .** , հրաման ըրէք **Եւ իրե-**
լցն եւ **Վ** արպետի մը որ ձեզի ընկերանան եւ **Օ**թ . : . կին
չորս կողմը խուզարկեցէք , **Հիւսիսէն սկսելով** » :

Ի . Վ . : . եւ իրեն օժանդակ **Եղբ . : .** ներն **Օ**թ . : . կին
չորս կողմը կը պտըտին **Հիւսիսէն սկսեալ** , **Երբոր Երեւ-**
մուտք հասնին , **Ի . Վ . : .** կրտս . « **Վեր . : .** , մեր խու-
զարկութիւնն ապարդիւն ելաւ » :

Վեր . : . « **Փորձ մ'ալ ընենք Սեծ . : . Եղբ . : . Ըբ .**
Վ . Վ . : . Եղբ . : . , հետերնիդ երկու վարպետ առնելով
միացէք միւս երեք **Եղբ . : .** րց հետ , որոց խուզարկութիւնն
անպտուղ ելաւ , եւ նորէն փնտուեցէք **Հարաւէն սկսելով** » :

Երկու Վ . : . ք եւ անոնց ընկերացող չորս **Եղբ . : . Ըբ**
Օթ . : . կին բոլորովը կը պտըտին **Հարաւէն սկսելով** , եւ
Երեւմուտք դարձած ատեննին , **Եղբ . : . Ե . Վ . : .** կրտս .

« **Վեր . : .** , մեր խուզարկութիւնն 'ի դերեւ ելաւ » :

Վեր . : . կը պատասխանէ . « **Սեծ . : .** դոց **Եղբ . : . Ըբ Ե .**
եւ **Ի . Վ . : .** ք , ձեզ ընկերացող **Եղբ . : .** ները հրաւիրե-

ցէք որ նորէն ձեզի հետ միանան . եւ այլ իմ կողմէս երկու
Եղբ . : . յր առնում , եւ ամենքս ՚ի միասին նորէն փնտուե-
լու եղնենք մանրակրկիտ խուզարկութեամբ . թերեւս յաջո-
ղինք մեր Յ . : . Ս . : . ին մարմինը գտնելու » :

Ինն Եղբ . : . ըբ ճամբայ կեղնեն եւ երեք անգամ դամ-
բանին բտրտիքը կը պտրտին :

Ըռաջին պտոյտն ընելէ ետեւ կը կենան , եւ Բ . Գ . : .
Եղբ . : . ըբ կըսէ . « Հողակոյտ մը կը տեսնամ որուն հողը
նոր խառնուած է » :

Գ . եր . : . կըսէ . « Երթանք դէպ այդ հողակոյտը » :

Երկրորդ պտոյտէն ետեւ Եղբ . : . Ը . Գ . : . կըսէ .

« Ըյս հողակոյտին վրայ Ը կասիայի ճիւղ մը կը տեսնեմ » :

Գ . եր . : . կըսէ . « Ը ելի մօտն երթանք , այդ նշաններն
ինձ գուշակել կուտան որ մեր խուզարկութեանց վախ-
ճանին հասանք » :

Երրորդ պտոյտը կընեն , որն որ կատարուելէն վերջը
Գ . եր . : . կըսէ . « Հաւանական է որ այս Ը կասիայի ճիւղը
Քիրամն սպաննողներն այս հողակոյտիս վրայ դրած են ,
որպէս զի կարող ըլլան դիակը թաղած տեղերնին ճանչե-
լու . աներկբայ եմ որ այս անգամ մեր խուզարկութիւն-
ներն ապարդիւն պիտի չեղնեն » :

« Ստատ՛ք , խլեցէք այդ Ը կասիայի ճիւղը » : (Հրամա-
նը կը կատարուի)

« Եղբ . : . ըբ իմ , մեր խուզարկութիւններն աւելի հե-
ռուն մղելէ առաջ , որովհետեւ կարելի է որ աւազակները
Քիրամէն բռնի առած ըլլան Ս արպետի խօսքն ու նշանը ,
կառաջարկեմ մէջերնիս որոշել , որ Քիրամի մարմինը
դտած ատեննիս առաջին նշանը որ ընենք եւ առաջին խօս-
քը որ մեր բերնէն ելնէ , այս վայրկենէս եւ ասկէ վերջը
միշտ մեր ուխտին մէջ Ս արպետի նշանն ու խօսքն անոնք
ըլլան : (Ի նշան հաւանութեան ամեն Եղբ . : . ըբ ձեռու-
նին կերկնցընեն)

Գ . եր . : . « Ըրեմն այդ հողին մէջ փնտուենք , Եղբ . : .

բք իմ ” : (Քիրամին մարմնոյն վրայէն դադաղին ծածկոցը կը վերցնեն , եւ ամեն Եղբ . : . բք սոսկման նշանը կընեն :)

Գ. եր . : . գերեզմանին վրայ ծռելով դիակը շօշափել կը ձեւացնէ եւ ցաւագին ձայնով մը կըսէ .

“ Մ . : . Պ . : . Ն . : . . մարմինը ոսկորներէն կը զատուի ” :
Ը . եւ Բ . Գ . : . Եղբ . : . բք իրարու ետեւէ նոյնը կընեն ու կըսեն . յետոյ Գ. եր . : . կը յաւելու .

“ Ուրեմն ճշմարիտ է եղբր . ահա մեր Սարգեա Քիրամին դիակը : Հեծե՛նք , հեծե՛նք , հեծե՛նք ” :

Ը . եւ Բ . Գ . : . ք յաջորդաբար կը կրկնեն . հեծե՛նք , հեծե՛նք , հեծե՛նք ” :

Գ. եր . : . նորէն գերեզմանին կը մտնեսայ , դիակին վրայ կը ծռի , եւ նորէն կանգնելով , կըսէ .

“ Գոհութիւնն Սեծ Տարտարապետին Տիեզերաց , ահա մեր Սարգեա Քիրամին գոհարը (եւ կը ցուցնէ զայն) . մէջ տեղը Ե դիրը կը փայլի՝ սկզբնատառ Յաւիտե նականին անուան . . . ուստի մեր կսկիծը դադրեցնենք Եղբ . : . բք իմ , եւ այս անգին դանձը , տանինք Ղաբիրը գնենք ”

(Բաժանման վարագոյրը կը վերցնեն , եւ Ղաբիրը փառաւոր կերպով լուսաւորեալ կը տեսնուի . Գ. եր . : . հոն կեչնէ եւ Նոան կիւնի գոհարը Սրեւելքը զարդարող յըջանակի մը մէջ կը դնէ . ամեն Եղբ . : . բք իրենց սեփական տեղերը կերթան՝ բացի Արարողապետէն եւ Նուիրեալէն , որ Սկասիայի ճիւղը ձեռքը կը կենայ :)

Գ. եր . : . նախագահութեան աթոռը նստելով երրակի բախում մը կը հրամայէ , զոր եռանդեամբ կը կատարեն :

Յետոյ խօսքը նուիրելոյն ուղղելով .

“ Սատա՛ր , կըսէ անոր , ժամանակն եկաւ որ այս այլաբանական տեսարաններուն ներքեւ ծածկուած բարոյական խրատները հասկընալու համար ձեր մտքին կրած աշխատութեանց օգնութեան հասնինք :

“ Քիրամ մեզի համար գերահանճար մարդու մ'ու

նշանաւոր գործաւորի մը տիպարն է, որ ամեն արհեստից եւ դիտութեանց հմուտ եւ ամեն առաքինութեամբք մեծ էր: Մեզի համար ալ հետեւողութեան օրինակ մ'է: Մարդս աշխատութեան համար ծնած է, զոր պէտք է աշխուսոյնէ ամեն տեսակ բարի գործերով: Մեր ընկերութիւնն աշխատութիւնը կը պատուէ իբրեւ երջանկութեան ամենէն անարատ աղբիւրներէն մէկը ժարդկութեան համար. ուստի կը հալածէ դատարկութիւնը, եւ իւր անդամակիցները բարոյականացնելով՝ կը ջանայ հրաւիրել որ անոնք ալ համայն մարդկութիւնը բարոյականացնեն:

« Բրննագրական դաւանութեան ամենէն բարձր իմաստն է Աստուծոյ էութեան եւ հոգւոյ անմահութեան հաւատալ:

« ՂԱստուած « Մեծ Ճարտարապետ Տիեզերաց » կը կրչենք:

« Մեր խորհուրդներուն մէջ ամեն տեղ Գերագոյն էակին խորհրդաւոր պատկերը կը ներկայացնենք. որ եւ է ձեւի ներքեւ զայն նիւթականացնելն անոր աստուածային մեծփայլութիւնը պզտիկեցընել է. վասն զի ինքն է Ար էն:

« Եւ յիբաւի Աստուած ամեն էութեանց մէջ կերելի բնութեան մէջ էից տիեզերական ներդաշնակութիւնն է, եւ այս ներդաշնակութիւնն անհնար է ժխտել. արեւուն մէջ որ տիեզերքը կը լուսաւորէ եւ կը կենդանացնէ. անհամար մլրրակաց մէջ որք անհունութեան մէջ կը հողովին. բիւրաւոր աստեղաց մէջ որք անսահման տարածութեան մէջ սփռուած են հրաշալի կարգաւորութեամբ. նոյն իսկ մեր երկրագունտին՝ թէ՛ ամբողջութեանը մէջ եւ թէ՛ անոր կենդանութիւն տուող ամեն էակաց մէջ, ինչպէս նաեւ անոր ծոցը փակուած բուսոց եւ մեսաղաց մէջ. վերջապէս եւ մանաւանդ կայ ու կերելի այն գերագոյն իմացականութեան մէջ՝ որ մարդուս միայն բարեմասնութիւնն է:

« Իսկ հոգւոյ անմահութեան խորհրդանիշն է մեր մէջ՝ Բիրամի գիակին վրայէն խորհրդաւոր Տէլգային դիւար,

զոր միշտ իբ վրայ կը կրէր : Եթէ իր մարմինը՝ որ լոկ փոշի էր՝ փոշի դարձաւ, հողին՝ որ իր էութեան եթերական մասն է, իրմէ ետքն ալ կապրի : Գերագոյն վառարանին այս բոցանշոյլ կայծը՝ աստուածութեան պէս աննիւթ գոյացութիւնը՝ իրեն պէս անմահ է . ասկէց յառաջ եկած է Եռանկիւնին այլարանութիւնը Ե գիրով զարդարուած, որ Եհովայի խորհրդանիշն եղող երկրաչափական ձևին եւ Տիեզ. : Մեծ . : Նարտ . : ին անուան սկզբնատառին միաւորութիւնն է :

“ Երեք ուխտազանց ընկեր Քիրամը կը հալածեն եւ կըսպանեն . ասիկա պատկեր է այն պատերազմին եւ բաւրոյական մահուան՝ որովք ընկերութեան ամենէն զնատակար եղող այս երեք միութիւնները կը չարչարեն զմարդ . տգիտութիւն, կեղծաւորութիւն եւ փառասիրութիւն :

“ Իրենց մեծ անուն գլխաւորը վնասուելու գացող Եղբ. : Ըբ, այս մոլութեանց հակառակ եղող առաքինութեանց առաքեալներն են . այն է իմաստութեան, ճշմարտութեան, եւ անշահասիրութեան հետեւողներ :

“ Եախ քիչուոր կերթան եւ պարապ կեընեն . կը միանան եւ այն ատեն իրենց ջանքը կատարեալ յաջողութեամբ կը պսակուի . ասով կը հաստատուի այն առածին ճշմարտութիւնը թէ միութիւնն ուժ կը կազմէ, եւ աւետարանական այն գեղեցիկ պատուէրը՝ զոր չենք կրնար ըստ բաւականին դրուատել, “ Զայցեցէք եւ գալիք ” :

“ Իրենն մեք ալ անոնց պէս միանանք, եւ սերտ խումբ մը կազմենք Տիեզերական բարոյականի դրօշակին ներքեւ . որ է Եզատ որմնադրութեան դրօշակը . պատերազմինք մեր կրից գէմ . արմատախիլ ընենք մեր մոլութիւնները . գործադրենք ամեն առաքինութիւնները, գլխաւորապէս ներողամտութիւնն ու մարդասիրութիւնը : Քիրամին օրինակին հետեւելով՝ մեռնինք քան թէ այս ճամբուն մէջ շարունակ քալելու համար ըրած երգումնիս աւրենք : Ինչպէս որ այս արարողութեան մէջ թանձր խաւարին պայ-

ծառ լոյս յաջորդեց, նոյնպէս վե՛հ Տէլդան երեւցածին պէս՝ լոյսը պիտի ծագէ :

« Լ՛յս է, Լ՛զբ .: խմ, Որմ .: Ա՛րապ .: տաց խորհուրդ- ներուն եւ սկզբանց բնական եւ ճշմարիտ մեկնութիւնը . ասկէց կրնաք դատել թէ ո՛րչափ գեղեցիկ է մեր ուխտը , որ իրե՛ն պատիւ կը սեպէ առաքինութիւնը փառաւորել եւ մոլութեանց դէմ մարտնչիլ , որով աստուածութեան սեղան մը կըլլայ :

« Լ՛ստուածութեան գլխաւոր ստորոգելիքն են՝ Օ՛ջ- րութիւն , Լ՛րդարութիւն , Ա՛էր (Օ՛ջորութիւն ստեղծիչ , Լ՛րդարութիւն ուղղիչ , Ա՛էր կենդանացուցիչ) : Որմնադ- րութիւնն ուրիշ բան չըներ , բայց եթէ սոյն ստորոգելիքն իր երեք խորհրդաւոր Լ՛ստիճանաց մէջ գործադրել :

« Լ՛շ .: կերտի Լ՛ստիճանին մէջ մարդը խաւարէն ՚ի լոյս կը հանէ , որ է ստեղծել :

« Կատարի աստիճանին մէջ նիւթական եւ բարոյա- կան աշխատութեանց գործիքները գործածել կը սովբեցնէ , որ է արհեստից ճարտարութեան եւ առաքինութեան գի- տութիւնը գործադրել . եւ այս է ուղղել :

« Ա՛ երջապէս Ա՛ արպետի Լ՛ստիճանին մէջ գիտու- թիւնն իր սեփական կատարելութեանը գործածել կը սովբեցնէ , որ է կենդանացնել :

« Եւ այս երեք Լ՛ստիճաններուն մէջ պարունակեալ ուսումը բնականաբար մեզ կառաջնորդէ մեր Ուխտին վեհմ նշանաբանը գործադրելու , որ է « Լ՛ղատութիւն , Հաւա- սարութիւն , Լ՛զբայրութիւն :

« Լ՛յս երեք բառերը մեզի համար քաղաքական տե- սութեան մը բացատրութիւն չեն , այլ փիլիսոփայական դաւանութիւն մը :

« Որմնադրութիւնը Պետութեանց քաղաքական սահ- մանադրութիւններուն չիզբաղիր , ոչ ալ աշխարհիս վրայ տարածուած այլ եւ այլ կրօնքներուն :

« Իր բռնած բարձր գրից շրջանակին մէջ ամենուն

քաղաքական համակրութիւններն եւ կրօնական հաւատքը կը յարգէ : Աւստի եւ իւր Սահմանադրութեան համեմատ այս նիւթոց վրայ որ եւ իցէ վիճաբանութիւններն արգիլ եալ են իւր Գործ ։։ Նաց մէջ , եւ կը յիշեցնէ իր հետեւողաց , թէ գաղափարաց սահմանին մէջ աշխատած ժամանակնին , իբրեւ Արմնագիր եւ իբրեւ քաղաքացի՝ իրենց անհրաժեշտ պարտքն է յարգել եւ պահել իրենց բնական երկրին օրէնքը :

« Եղբայր իմ , մեր սկզբունքն ու նպատակը հասկըցաք հիմա . մեր ջանքէն ուրիշ փոխարինութիւն չենք սպասեր , բայց միայն բարիք ըրած կամ ընելու ջանացած ըլլանու գոհունակութիւնը . կուզէ՞ք մեզի հետ միանալ եւ այս անձնութեան գործին կատարմանը աշխատիլ » :

Ստտարը « Ե,յո՛ » պէտք է պատասխանէ :

Նայն վայրկեանին Եղբ ։։ Երար ։։ « Նուիրեալք սեղանին առջեւ կը սանի՝ ակասիայի ճիւղը միշտ ձեռքը բռնած , որպէս զի երդումն ընէ :

Ստտարը « Ե,յո՛ » պատասխանելէն անմիջապէս վերջը , Գեր ։։ կրսէ . « Ոտք ելէք եւ ՚ի կարգ , Եղբ ։։ ըք իմ , Նուիրեալն երդում պիտի ընէ » :

։։ Ստտար , կրսէ Գեր ։։ , Եղատ Արմնագիր ընդունուած ժամանակ յանձն առած ամեն պարտականութիւնն իր խղճի մտօք կատարեցի՞ք :

Պ. Ե,յո՛ , Գեր ։։ :

։։ Ստտար ընդունուելէն ՚ի վեր աշխատեցա՞ք որ անսուրբ աշխարհի ամեն ազտերէն ձեր սիրտը մաքրէք :

Պ. Որչափ որ կըցայ , Գեր ։։ :

։։ Եթէ դժբաղդաբար ո՞ր եւ իցէ մէկուն դէմ ոխակալութիւն կամ վրէժխնդրութեան փափաք մը պահած ըլլաք , այս սրբավայրիս մէջ կը խոտտանա՞ք այդ կիրքերէն անմիջապէս հրաժարիլ , եւ այսուհետեւ չչարունակել :

Պ. Ար խոտտանամ :

Գեր ։։ . « Ուրեմն այս սեղանին եւ ձեռքերնիդ բռն-

նած ահասիրայի ճիւղին վրայ հետեւեալ երգումն ինձ հետ կրկնեցէք » :

ԵՐԳՈՒՄՆ

Առաջի Մ .: Ճար .: տին Տիեզ .: ց եւ այս վեհ ժողովիս , եւ առ ոտս սեղանիս , ես՝ Ա .: . . . արդէն Աշակերտ եւ Սատար ընդունուած ատենս երդմամբ յանձն առած պատիժներս վերստին յանձն առնելով պատուոյս վրայ խօսք կուտամ , որ երբէք ո եւ իցէ անձի մը չի յայանեմ Ա արպետի Աստիճանին դաղանիքը՝ որ պիտի աւանդուի ինձ » :

Գեր .: սուրբ Առնիբեղյն դիտին վրայ դնելով կըսէ .
« Մ .: Ճ .: Տիեզ .: ց օգնէ՛ քեզ » :

(Երեք հարուած կուտայ)

« Քու նպատակներդ սուրբ ըլլան » :

(Գարձեալ երեք հարուած կուտայ)

« Եւ երգումներդ նուիրական ըլլան » :

(Գարձեալ երեք հարուած կուտայ)

« Ի Փ .: Մ .: Ճ .: տին Տիեզ .: ց , յանուն Մեծ Ա արպետի Ուխտիս եւ ընդ Հով .: Մ .: Արեւ .: լեց Գազզիս » :

« Այլ հաստատեմ , կը կարգեմ , եւ կը ձեռնադրեմ զձեզ Ա արպետ Որմնադիր Ան .: Ս .: Օթ .: կիս , որ պէս զի այս Աստիճանիս յարակից իրաւունքներն , ու առանձնաշնորհութիւնները վայելէք » :

Երեք անգամ սուրին վրայ կը զարնէ , եւ նորէն՝ Առնիբեղյն ուղղելով .

« Եղբ .: ք իմ , այդ ահասիրայի ճիւղը Քիրամի դերեղմանին վրայէն առնելնէդ՝ ՚ի վեր շարունակ ձեռքերնիդ բռնեցիր : Այդ ալ խորհրդանիշ մ'է՝ որուն մեկնութիւնը պէտք է սամ ձեզ :

« Լկասիան այլ եւ այլ նկատմամբ Որմնադրութեան նշանակն է՝ փայտովը, կեղեւովն ու տերեւներովը :

« Փայտովը. — վասն զի անտխեղծ է, ինչպէս որ Որմնադրութեան մաքրութիւնն ալ անապական է :

« Կեղեւովը. — վասն զի ամեն փոստակար ճճիները կը հալածէ, ինչպէս որ Որմնադրութիւնն ալ ամեն մոլութիւնները կը մերժէ :

« Տերեւներովը. — վասն զի գիշերներն եւ արեւուն ծագելէն առաջ ակասիային տերեւները վար կը ծռին . իսկ քանի որ արեւը դէպ ՚ի զէնիթ յառաջանայ, անոնք ալ դէպ անոր կը շտկուին, ինչպէս որ ձեր խմացականութիւնը որ մեր վերջին խորհուրդներուն տեղեակ չէր, հետզհետէ ուղղուեցաւ եւ ընդարձակեցաւ քանի որ անոնց իմաստն իր առջեւ պարզուեցաւ » :

Խօսքը Եղբ . : . Երար . : . ին ուղղելով .

« Եղբ . : . Երար . : . , առէք այդ ճիւղը եւ դացէք Ղաւբիրին մէջ իր յատուկ տեղը դրէք » :

Յետոյ սեղանէն իջնելով եւ Նուիրելոյն մօտենալով եղբայրական համբոյրը կուտայ եւ կըսէ .

« Ղուք հիմա Ա . : . ի կարգը տխոզոսն եւ իրաւունքն ունիք . մի մոռնաք երբէք որ ձեր հաւասարներուն մեծարանք ու անձնուիրութիւն, ձեզնէ ստորիններուն պաշտպանութիւն ու անձնուիրութիւն, եւ ամենուն բարի օրինակ պարտաւոր էք :

« Եղբ . : . իմ, այս աստիճանիս մէջ ալ նախորդներուն պէս զիրար ճանչելու համար խօսքեր նշաններ եւ շօշափում մ'ունինք :

ԱՆՑԱԽՕՍԻՔ

« Լնցախօսն է Ղ . . . որ է Ղիպէլ լեռան բնակիչներուն անունը, որք Տաճարին կառուցման աշխատէր էին » :

ՆՈՒԻՐԱԿԱՆ ԽՕՍԻՔ

« Ս . : . Պ . : . Ն . : . , որ ըսեալ է « Ս՝արմինը ոսկորներէն

կը դատուի” ՚ի յիշատակ այն ուխտագրութեան՝ որ Ս արպեաները Վիրամի մարմինը գտած ժամանակնին մէջերնին հաստատեցին :

ԿԱՐԳ

“ Ե՛ջ թեւն անկիւնայտիի ձեւով եւ ձեռքն ալ հորիզոնական գիրքով ծռել՝ բուժ մատը սրտին վրայ :

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՆՇԱՆ

“ Ե՛յս գիրքին մէջ աջ ձեռքը հորիզոնապէս քաշելով ուղղակի ազդեր վրայ ձգել :

ՍՈՍԿՄԱՆ ՆՇԱՆ

“ Ե՛ջ ոտքը ետ տանիլ, մարմինը դէպ աջ ծռել, ձախ թեւն առաջ եւ աջն ալ դէպ ետին երկնցընել :

ԱՆՁԿՈՒԹԵԱՆ ՆՇԱՆ

“ Ե՛ջ սրունքը ձախին ետեւը, մարմինը քիչ մը դէպ ետեւ ծռած, ձեռքերն իրար կցած եւ ափ ՚ի վեր խոտորնակի գլխոյն վրայ դրած, եւ այս գիրքին մէջ աղաղակել :

“ Ե՛ռ ի՛ս որդիք Ե՛յր . . . ւոյն ” :

ՇՕՇԱՓՈՒՄ

“ Ե՛ջ ոտքն ալ ոտքի դէմ, ծունդ ծնկան դէմ, կուրծք կրծից դէմ, աջ ձեռքովը հարցնողին ձեռքը մագլցի բռնելով եւ ձախ ձեռքն անոր աջ ուսին վրայ դրած . այս գիրքին մէջ՝ աջ ձեռքով երեք հարուած տալ, վերջը զայն հակադարձ կողմը շրջել երեք հեշ, ամեն անգամ որ եղբայրական համբոյրն եւ նուիրական խօսքը տրուի ” :

Ե՛յս կրթութիւններէն ետեւ Գ.եր . . . կըսէ .

“ Ե՛ղբ . . . Ե՛րար . . . նոր Ս արպետը Ե՛ . եւ Ի . Գ . . . Ե՛ղբ . . . ըց քով տարէք որ զինքը ճանչնան, եւ Ս . . . տի Ե՛տտիճանաւ Օթ . . . կ մտնելու կանոնը իրեն սովորեցնեն ” :

Ե՛յս կանոնական արարողութիւնները կատարուելէն վերջը՝ Գ.եր կըսէ .

“ Ոտք ելէք եւ ՚ի կարգ, Ե՛ղբ . . . ըք իմ ” :

« Մեծ յ. գոյ Եղբ. յ. բբ Ե. եւ Ի. Գ. յ. հրաւիրեցէք ձեր սիւներուն առջեւ շարուած Մեծ յ. բոյ Ս. յ. ներք, որպէս զի ասկէ ետեւ մեր Եմեն յ. սիր յ. լի Եղբ. յ. Ե. . . ը՛ որ սիւներուն մէջ տեղը կեցած է, Մեծ յ. բոյ Ս. արպետ ճանչնան, եւ ըստ այնմ սիրեն զինքը նոյն անկեղծ սիրով՝ զոր Արմնագիրք իրարու պարտական են :

« Միանգամայն հրաւիրեցէք որ ձեզի եւ ինձի հետ միանալով երբակի բախմամբ տօնեն թոշակի այս առաւելութիւնը՝ որ սոյն Մեծ յ. բոյ Եղբ. յ. օր շնորհուեցաւ » :

Շանուցումը Գ. յ. բուն միջոցաւ կատարուելէ, բաղխումն ըլլալէ եւ պատասխանը տրուելէ ետեւ, Գ. եր. յ. կրտսէ .

« Եղբ. յ. Երար յ., նոր Ս. արպետը Հարաւային Սիւնակին վերի ծայրը տարէք, որպէս զի Եղբ. յ. Ետեն յ. սին խօսելիք ճառին ուշագրտ. թիւն ընէ » :

(Տ՛աւ Եղբ. յ. Ետենախօսին)



Գեր .: իր հարցմանց պատասխանն որմէ ուզէ՝ անկէց կրնայ պահանջել . եթէ պատասխանողը Եղբ .: Գ .: .
 րէն զատ ուրիշ Վար .: պետ մ'ըլլայ, պէտք է որ երկու
 սիւներուն մէջ տեղը կանգնի՝ քիչ մ'առաջ :

Դ. Մեծ .: Եղբ .: , դուք Վարպետ էք :

Պ. Գեր .: , կըրնաք զիս փորձել . ահասիան ծանօթ է ինձ :

Դ. Ո՛ր ընդունուեցաք :

Պ. Հիբալին մէջ , այսինքն սրբավայրին մէջ :

Դ. Ներս մտած ասեմնիդ ի՞նչ տեսաք :

Պ. Սուգ եւ ստիումն :

Դ. Պատճառն ի՞նչ էր :

Պ. Տխուր դէպքի մը յիշատակը :

Դ. Ի՞նչ դէպք :

Պ. Բիրամ՝ Վարպետին սպանութիւնը :

Դ. Ո՞չ սպաններ է զինքը :

Պ. Երեք երդմնազանց Սատարներ :

Դ. Ե՛րբ սպանութիւնն իրօք եղած է :

Պ. Սեր ուխտն իբրեւ առակ ընդունած է :

Դ. Ե՛րբ առակին ներքեւ ի՞նչ խրատ ծածկուած է :

Պ. Բիրամ՝ Նշմարտութիւնը կը ներկայացնէ . երեք
 երդմնազանց Սատարներն ալ « Տգիտութիւնը , Վեղ-
 ծաւորութիւնը եւ Փառասիրութիւնը կը ներկայա-
 ցընեն :

Դ. Տաճարին մէջ մտնելէդ ետեւ ուրիշ ի՞նչ տեսաք :

Պ. Բիրամի դերեզմանը զոր աղօտ լոյս մը կը լուսաւորէր :

Դ. Ե՛րբ դերեզմանն ի՞նչ մեծութիւն ունէր :

Պ. Երեք սօր լայնութիւն , հինգ խորութիւն , եօթն
 երկայնութիւն :

Դ. Վրան ի՞նչ կար :

Պ. Եկասիայի ճիւղ մը :

- 1. Գերեզմանին մօտ կանգ առած ժամանակնիդ ի՞նչ պատուիրեցին ձեզ :
- 2. Ճիւղը վերցընել :
- 1. Ետքը ի՞նչ ըրին :
- 2. Արպետները մէջերնին որոշեցին որ Քիրամի մարմինը տեսած ատեննին ի՞նչ նշան որ ընեն եւ ի՞նչ խօսք որ իրենց բերնէն առաջին անգամ ելնէ , այնուհետեւ Արպետի նշանն ու խօսքն անոնք ըլլան :
- 1. Ուրիշ ի՞նչ ըրին :
- 2. Մարմինը ծածկող քողը վերցուցին եւ սոսկման նշան մը ըրին :
- 1. Դուք ալ ըրէք նայեմ , Եղբ . : . յը իմ :
- (Պատասխանողը խնդրուած նշանը կուտայ)
- 1. Քիրամին մարմինը գտնուած ատեն ի՞նչ տեսնուեցաւ :
- 2. Տեսնուեցաւ որ մարմինը ոսկորներէն կը զատուէր , եւ այս բանը Գեր . : . յն Մ . : . Պ . : . Ն . : . ըսելով բացատրեց :
- 1. Յետոյ ի՞նչ տեսնուեցաւ :
- 2. Ըմենադուտ ոսկիէ եռանկիւն մը , որուն կեզդրոնը G գիրը փորագրուած էր , որ սկզբնապտաուն է S . : . ց Մ . : . Ճար . : . ին անուանը , եւ եռանկիւնին տախտակներուն վրայ ալ « Հակի—սէ յն—ակի » բառերը :
- 1. Ի՞նչ կը նշանակեն :
- 2. « Ես եմ որդի ճշմարտութեան » :
- 1. Եկասիայի ճիւղն ի՞նչ ըրիք :
- 2. Երգումս ապէս վերջը , ճիւղը Մեծ . : . յ Եղբ . : . Մըար . : . տին սուի , որ Գեր . : . ին հրամանաւ Պարբիրը տարաւ :
- 1. Ոսկի եռանկիւնն ի՞նչ ըրին :
- 2. Երեւ . : . Լքը զարգարող շրջանակի մը մէջ դրին :
- 1. Արպետ ընդունուած ժամանակնիդ քանի՞ տարեկան էիք :

Պ. Եթէն եւ աւելի ,

Ն. Ինչո՞ւ եթէն եւ աւելի :

Պ. Կախ եթէն տարի , վասն զի () թեանն ուղիղ եւ կա-
տարեալ սեպուելու համար հարկ եղած սպայներուն
թիւը եթէն է . իսկ աւելի բաւը կաւելցընեմ նշանա-
կելու համար թէ ոչ միայն խորհրդաւոր Որմ . : թեան
ամեն խորհուրդները գիտեմ , այլ եւ անոնց մէջ պա-
րունակուած խրատները :

Ն. Արաբեաններն ի՞նչպէս ճանրորդութիւն կընեն :

Պ. Ըրեւ . : քէն Ըր . : մուտք , եւ շարաւէն շիւսիս ,
այսինքն բոլոր աշխարհի երեսը :

Ն. Ինչո՞ւ համար :

Պ. Ըրեւուն պէս ամեն տեղ լայր տարածելու համար :

Ն. Ի՞նչ բանի վրայ Արաբեանները կաշխատին :

Պ. Գծելու տախտակին վրայ :

Ն. Իրենց թոշակն ո՞ւր կընդունին :

Պ. Միշավայրի սենեկին մէջ :

Ն. Երեք սեղանները լուսաւորող ինն աստղերն ի՞նչ կը
նշանակեն :

Պ. Բիրամի մարմինը փնտուելու դացող ինն Արաբեա-
նները կը ներկայացնեն :

Ն. Որմնադրաց ամենէն ընտանի եւ ամենէն սիրելի գոր-
ծիքներն որո՞նք են :

Պ. Ընկիւնաչափն ու Արկինը :

Ն. Ինչո՞ւ համար :

Պ. Ասն զի բարի Որմնադիր մը չի կրնար խոտ-
արդարութենէ ու ճշմարտութենէ , որոց այդ գոր-
ծիքները խորհրդանիշն են :

Ն. Եթէ մեծ տաղնապի մը մէջ գանուիք , եւ կեան-
քերնիդ վտանգի մէջ ըլլայ , ի՞նչ կընէք :

Պ. Ընձկութեան նշանը կընեմ :

Ն. Ի՞նչ կերպով կըլլայ այդ նշանը :

(նշանը կընէ ազազակելով . « Ս . իս » , եւ այլն)

ՓԱԿՈՒՄՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

Հ. Մեծ .: գոյ Եղբ .: Ե. Դ. .: , միջավայրի սենեկին
աշխատութիւնները ժամը քանիի՞ն կը դոցուին :

Պ. Կէս գիշերուն :

Հ. Ժամը քանի՞ն է , Եղբ .: Բ. Դ. .: :

Պ. Կէս գիշեր է , Գ. եր .: .:

Գ. եր .: .: կըսէ .

« Որովհետեւ կէս գիշեր է , եւ մեր աշխատութիւն
ներն այս ժամուս կաւարտին , Եղբ .: .: ք Ե. եւ Բ. Դ. .: .: ք ,
հրաւիրեցէք մեր Մեծ .: .: յ Ա. արպ .: .: ները որ ձեզի եւ
ինձի հետ միանալով աշխատութիւնները դոցելու օգնեն » :

Դ. .: .: ք ծանուցումը կը կրկնեն :

Գ. եր .: .: կըսէ . « Ոտք ելէք եւ ՚ի կարգ , Եղբ .: .: ք իմ :

« Ի Փ .: .: Մ .: .: ծի Ճ .: .: օին Տիեզ .: .: ց , յանուն Մեծ
Ա. արպետին Ռ. խախա եւ ընդ Հով .: .: աւ Մ .: .: ծի Արեւ .: .:
լից Գաղղիոյ , Յ .: .: Օթ .: .: կիա աշխատութիւնները կը դո-
ցեմ սովորական նշաններով եւ բախմամբ » :

Ինն անգամ կօփիչով կը զարնէ եւ կըսէ .

« Եւ իս , Եղբ .: .: ք իմ , նշանաւ եւ բախմամբ » :

Յետոյ կօփիչի հարուած մը կուտայ եւ կըսէ .

« Աշխատութիւնը դոցուեցան , Երթանք խաղաղու-
թեամբ » :

ԾԷՍ ՍԿՈՎՏԵԱՆ

Ե. Դ. .: .: ը Հիւսիսային սիւնին առջեւ կը կենայ . Բ.
Դ. .: .: ը Հարաւայինին առջեւ :

Բախումն ու ճայնարկութիւնն առաջին երկու Աստի-
ճաններուն պէս կը տարբերին :

Նուիրական խօսքն է Մ .: .: .: , Լնցախօսքն է Թ .: .: .: :

Նիսանն ու կրթութիւնը Գաղղիական ծէսին պէս ,

ՀԲԸՀԸՆԳ

ՃԱՇԻ ՕԹԵԱԿԻՆ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԻ ԿՈՉՆՈՑ

Սեղան	
Սխոյ	Առաջադասութիւնք
Սկաւառակը	Սկսարեղէնք
Պնակը	Աղէւսք
Դրդալը	Ծէփէնք
Պատառաքաղը	Բրէնք
Դանակը	Սոսերք
Անձեռոյք	Դրոշակք
Աթոսք	Նորարանք
Մոմք	Ասորեղէնք
Ուտիկ	Ծասէլք
Կերակուրք	Շինառանձնիկք
Հաց	Անրաշ փայլք
Դինի	Բարի փայլք
Ջուր	Բոյլ փայլք
Գարեջուր	Դեղին փայլք
Ողկիւն ըմպելիք	Պայլոյլ փայլք
Աղ	Ճերմակ ասորեղ
Պղպեղ	Դեղին ասորեղ
Դաւաթք	Հրաղէնք
Սրուակը եւ սկահք	Տակառք
Խմիկ	Կրակ ընէլք



Սեղանը երկթեւ սանդուղի ձեւով պիտի պատրաստուի . կամարն Արեւելքի կողմը եւ երկու թեւերն Արեւմտից կողմը :

Մեծ . . սեղանին գլուխը կը նստի կամարին դուրսի կողմը . Անոր աջ ու ձախ կողմը կը նստին Այ . . Եղբ . . ք իրենց աստիճանաց եւ պաշտամանց համեմատ , Գաղղիոյ Մեծ Արեւելից սպայներէն սկսեալ : Երկու Գ . . ք սեղանին երկու ծայրերը կը նստին :

Եղբ . . Ատեն . . հարաւային սիւնակին գլուխը կը նստի . Եղբ . . Քարտ . . հիւսիսային սիւնակին գլուխը . Գանձ . . եւ Հիւր . . ալ անոնցմէ վար :

Ներսի կողմը , Մեծ . . ին գիմացը կը նստին Եղբ . . Արարող . . եւ Եղբ . . ք Կոչն . . տք :

Միւս ամեն Եղբ . . ք անխորաբար կը նստին :

Ներսի կողմը մարդ չկրնար նստիլ՝ մինչեւ որ դուրսի կողմը լցուած չլըլայ . եւ ներսի կողմը նստող Եղբ . . ք միայն վերջին բաժակին ժամանակը ոտքի վրայ կենեն :



ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Մեծ .: կօփիչի հարուած մը կուտայ, որուն Ա. եւ Բ. Պ .: Եղբ .: ք կը պատասխանեն, եւ Տաճարին փակուած ըլլալն ստուգելէ ետեւ կրտէ .

« Ոտք ելէք եւ ՚ի կարգ, Եղբ .: ք իմ, դադարեալ աշխատութիւնները նորէն կ'սկսին փութոյ պնդութեամբ : Խօսքը Եղբ .: Ատեն .: ին է » :

Եղբ .: Ատեն .: մաղթանք մը կուզէ առ Մ .: Ճ .: Տ .: ց, քայքայուելիք նիւթոյ վրայ անոր օրհնութիւնը կը հայցէ . Յետոյ Մեծ .: կօփիչի հարուած մը տալով կրտէ .

Եղբ .: ք Ա. եւ Բ. Պ .: ք, ձեր սինակաց ներքեւ շարուած Եղբ .: ց իմացուցէք թէ աշխատութիւնները դադարեալ են, եւ հիմա ծառքելու պիտի զբաղինք » :

Այս ծանուցումն ըլլալէ ետեւ, Մեծ .: կրտէ .

Եղբ .: ք իմ, տեղերնիդ նստէք » :

ԲԱԺԱԿԲ

Երբոր առաջին բաժակն առաջարկելու ժամանակը դայ, այսինքն երբոր Մեծ .: յարմար դատի, սփորաբար առաջին կերակուրէն ետեւ, կօփիչի հարուած մը կուտայ, որուն երկու Պ .: Եղբ .: ք կը պատասխանեն . յետոյ կրտէ .

« Եղբ .: ք Ա. եւ Բ. Պ .: ք, ձեր սինակաց առջեւ շարուած Եղբ .: ց ծանուցէք թէ դադարեալ աշխատութիւնները նորէն կ'սկսին փութոյ պնդութեամբ » :

Ծանուցումն ըլլալէ ետեւ, Մեծ .: կրտէ .

Եղբ .: ք Ա. եւ Բ. Պ .: ք, ձեր հրամանատարութեան ներքեւ եզոյ Եղբ .: քը հրաւիրեցէք որ առաջարկելիք բաժակիս համար հրազէնները լեցնելու եւ ուղղելու պատրաստուին » :

Ծանուցումն ըլլալէ ետեւ՝ Մեծ .: կրտէ .

« Լեցնենք եւ ուղղենք, Եղբ .: ք իմ » :

Երկու Պ . . . ք կը կրկնեն . յետոյ Սեծ . . . կըսէ .
“ Եղբ . . . ք Ե . եւ Բ . Պ . . . ք , ձեր սիւնակաց առ-
ջեւ բոլոր հրազէնները լցուած եւ ուղղուած են ” :

Երբոր դրաստեա պատասխան արուի , Սեծ կըսէ .

“ Ոտք ելէք եւ ՚ի կարգ , Եղբ . . . ք իմ , եւ սուրերնիդ
ձեռք առէք ” :

“ Բոլոր Եղբ . . . ք ոտքի վրայ կեննեն՝ բաց ՚ի սեղանին
ներսի կողմը դանուողներէն , դրօշակնին ուսերնուսն վրայ
կառնուն , սուրերնին աջ ձեռքէն ձախը կանցունեն , եւ
կարգաւ կը կենան : .

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱԿ

Սեծ . . . կըսէ .

“ Եղբ . . . ք իմ , առաջարկելիք բաժակս Պեաութեան
դլխոյն կենդանութեանը համար է , որուն հետ պէտք է
հասկնանք կայսրորդին կայսրուհին եւ կայսերական տոհմը .
այս պատուական կենդանութեանց կը յարեւք նաեւ մեր
մաղթանքը վասն փառաց եւ բարօրութեան Պաղղիոյ ” :

Պ . . . ք կը կրկնեն այս ծանուցումը . յետոյ Սեծ . . .
կըսէ .

“ Ուշագրութիւն , Եղբ . . . ք իմ .

“ Ըջ ձեռքն ՚ի զէ՛ն :

“ Վ ե՛ր առէք :

“ Կշա՛ն առէք :

“ Երբեք երբ . — Ի կենդանութիւն Վ եհափառ կայսեր :
Երբեք երբ . — Ի կենդանութիւն կայսրորդւոյն կայսրուհ-
ւոյն եւ կայսերական տոհմին :

Երբեք երբ . — Ի փառս եւ ՚ի բարօրութիւն Պաղղիոյ :

“ Օէնքերն ՚ի վայր :

“ Օ՛ն յառաջ . 1, 2, 3 . — 1, 2, 3 . — 1, 2, 3 . — մէկ ,
երկուք , երեք :

(Մէկ հարուած միայն պէտք է լսուի) ,

“ Սուրերն աջ ձե՛ռք .

« Ողջոյն սր՛՛վ .

« Սուրբերն ՚ի վայր առանց աղմուկի :

« Առ իս, Եղբ . . . ք իմ, նշանաւ եւ երեք բախմամբ :

« Կեցցե՛ն, կեցցե՛ն, միշտ կեցցե՛ն :

« Եղբ . . . ք իմ, տեղերնիդ նստէք » :

Ամենն ալ կը նստին . (Մեծ . . . կրնայ ընդլայնել այս բաժակը :)

ԵՐԿՐՈՐԳ ԲԱԺԱԿ

Մեծ . . . կրտէ .

« Եղբ . . . ք Ա . եւ Բ . Պ . . . ք, ձեր հրամանատարու թեան ներքեւ եղող Եղբ . . . քը հրաւիրեցէք որ առաջարկելիք երկրորդ բաժակիս համար հրազէնները լեցընելու եւ ուղղելու պատրաստուին » :

Ամեն բան առաջին բաժակին համար ըսուածին պէս կատարուելէ ետեւ՝ Մեծ . . . կրտէ .

« Ս . . . Եղբ . . . ք իմ, առաջարկելիք բաժակս՝ ուխտիս Ա սեմնապատիւ Մեծ վարպետին կենդանութեանը համար է . այս սիրելի կենդանութեան կը յարենք Պաղղիոյ Մեծ Արեւելից կենդանութիւնը, ինչպէս նաեւ ուրիշ երկիրներու Ս . . . Ա . . . այ եւ Ս . . . Արեւ . . . ից կենդանութիւնը . վերջապէս այս կենդանութեանց կը յարենք մեր ամենաձերբ մաղթանքը վստն յաջողութեան Որ՛՛մ . . . թեան ընդ ամենայն աշխարհ » :

(Մեծ . . . կրնայ այս բաժակն ալ ընդլայնել) :

ԵՐԿՐՈՐԳ ԲԱԺԱԿ

Երկրորդ բաժակին արարողութիւնն աւարտելէ ետեւ, Եղբ . . . Ա . Պ . . . խօսք կը խնդրէ Մեծ . . . էն, եւ ստանալով կրտէ .

« Մեծ . . . , կաղաչեմ ձեզ որ հրազէնները լեցընել եւ ուղղել տարւ հաճիք բաժակի մը համար՝ զոր պատիւ պիտի համարիմ ինձ առաջարկել » :

Մեծ . . . կը հրաւիրէ Եղբ . . . Ատեն . . . եւ Բ . Պ . . . ք

որ իրենց հրամանատարութեան ներքեւ եզող Եղբ . ։ ց առջեւ շարուած հրազենները լեցընել եւ ուղղել տան . եւ երբոր ամենուն ալ լցուած եւ ուղղուած ըլլալն ստուգէ , կըսէ .

« Եղբ . ։ Ե . Գ . ։ , որուն համար է ձեր առաջարկել ուղած բաժակը :

Ե . Գ . ։ կը պատասխանէ . « Մեծ . ։ , ձեզ համար է :

« Եղբ . ։ Ի . Գ . ։ եւ Եղբ . ։ Ետեն . ։ , հաճեցէք միանալ ինձ հետ , դուք , Եղբ . ։ Ի . Գ . ։ , ձեր հրամանին ներքեւ եզող սիւնակին . դուք ալ , Եղբ . ։ Ետեն . ։ , Երեւ . ։ ից ըսելու :

« Ոտք ելէք եւ ՚ի կարգ , Եղբ . ։ ք իմ , սուր ՚ի ձեռին :

« Եղբ . ։ ք , առաջարկելիք բաժակս մեր Ս . ։ Մեծ . ։ ին կենդանութեան համար է . որուն պիտի յարենք նաեւ իր ընտանեաց կենդանութեան եւ մեր Յ . ։ Օթ . ։ ին յաջողութեան համար մեր ամենաջերմ մազթանքը :

« Ուշադրութիւն , Եղբ . ։ ք իմ » :

Մնացեալը նախընթաց բաժակներուն պէս : (Ետեն մէկ Օթ . ։ ի մէջ այս բաժակն ըստ պարագային այլ եւ այլ կերպով կընդլայնի) :

Մեծ . ։ այս երրորդ բաժակին համար իր շնորհակալութիւնը յայտնելէ ետեւ՝ հրամանատարութիւնը նորէն ձեռք կառնու եւ վերջին երկու բաժակները կառաջարկէ :

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱԿ

Եյս բաժակը Գ . ։ րուն եւ Օթ . ։ ին միւս պաշտօնատարաց համար է . նոյնպէս Եյց . ։ Եղբ . ։ ց եւ ուրիշ ընկեր . ։ Օթ . ։ այց համար՝ եթէ կան :

Եյս բաժակէն ետեւ՝ Մեծ . ։ կըսէ . Եղբ . ։ ք Ե . եւ Ի . Գ . ։ ք , ձեր սիւնակները զարդարող Եղբ . ։ ց ի մացուցէք որ փութոյ պնդութեամբ շարունակուած աշխատութիւններն իմ առաջին կոփիչի հարուածովս պիտի դադրին : «

(8)

Պ . ։ . ք կը կրկնեն ծանուցումը . Մեծ . ։ . կփփեք կը զարնէ եւ Եղբ . ։ . ք ծառքել կ'սկսին :

ՀԻՆԳԵՐՈՐԿ ԵՒ ՎԵՐՁԻՆ ԲԱԾԱԿ

Այս բաժանն աշխատութիւնները պիտի գոցէ :

Աշխատութիւնները նորէն 'ի գործ դրուելէ եւ հրազենները լցուելէ եւ ուղղուելէ ետեւ , Մեծ . ։ . կրսէ :

Ոտք ելէք եւ 'ե կարգ , Եղբ . ։ . ք խճ , միութեան շղթան կազմելու համար :

Ամեն մարդ ոտքի վրայ կեննէ երկթ եւ կիտաբօրրակին թէ ներսը եւ թէ դուրսը , եւ ներսի կողմը կեցող Եղբ . ։ . ք Եղբ . ։ . Արար . ։ . ին եւ Եղբ . ։ . Մարդ . ։ . ին միջոցաւ կը հաղորդակցին դրսի կողմը կեցող Եղբ . ։ . ց հետ , որով շղթան կատարեալ կըլայ :

Սպաս . ։ . Եղբ . ։ . միշտ կը մասնակցի միութեան շրջութային (ՐՆԳՀ. Աման . ։ . յօդ. 266) :

Ամեն Եղբ . ։ . իր դրօշակին ծայրը՝ ալ եւ ձախ կողմը կեցող Եղբ . ։ . ց կուտայ եւ ինքն ալ անոնց դրօշակին ծայրը կը բռնէ :

Մեծ . ։ . կը ծանուցանէ թէ առաջարկելիք վերջին բաժակը երկու կիսագլխաց մէջ գտնուող համայն երջանիկ կամ դժբաղդ Որմ . ։ . ց համար է : Այս ծանուցումէն ետեւ բարեկամական խօսք մը կրսէ , զոր ամեն Եղբ . ։ . ք իրարու կը հաղորդեն եղբայրական համբուրիւ : Այլընդոյն խօսքը ետ դառնայ դայ , Մեծ . ։ . բաժակը կառաջարկէ :

Յետոյ սովորական կերպով աշխատութիւնները կը գոցէ :

Ծան . — Եթէ կոչուեքին ժամանակ Եղբ . ։ . մը երգ մը նուագելու կամ ձարա . ։ . հատուած մը ներկայացընելու փոփոքի : Մեծ . ։ . էն հրաման պիտի խնդրէ :

Մեծ . ։ . այն ներկայացուելիք հատուածին ինչ ըլլալը մինչեւ որ չհասկընայ հրաման չտար , եւ երբին նուագուելուն կամ ձարա . ։ . հատուածին ներկայացուելուն ժամանակը կորոշէ :

